

ԻՏԱԼԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՅՑԵԼԵՑ ԼԵՊԻՅ ՊԸՐՐԻԻ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրբեյ երէկ ընդունեց Իտալիոյ խորհրդարանի երեսփոխանական եւ ծերակուտական խորհուրդներու միացեալ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ ծերակուտական Կրիստօ Զորոնիի: Հանդիպումին ներկայ գտնուեցան Իտալիոյ դեսպան Ճիուզեփէ Բասիլի եւ երեսփոխան Միսպակ Ահապա:

Պատուիրակութեան պետը յայտնեց, որ Պըրբեյի հետ քննարկան են Իտալիական եւ լիբանանեան խորհրդարաններու բարեկամութեան ու գործակցութեան համաձայնագրի կապուած հարցեր:

Ծերակուտականը ըսաւ, որ Իտալիա եւ Եւրոպական Միութիւնը աւելի մեծ դեր պէտք է ունենան Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին մէջ, մանաւանդ Օսլոյի գործընթացի դիմագրաւած զօրակութիւններու յաղթահարման մէջ:

«Իտալիոյ արտաքին գործոց նախարար Լիբանան այցելութիւնը կը հաստատէ, թէ Իտալիա կը մնայ Լիբանանի կողքին, զօրավիզ կը կանգնի անոր եւ պիտի օժանդակէ հարաւային Լիբանանի վերաշինութեան», հաւաստեց ան:

ՇԷՆ ՔԱՊՊԱՆԻ ԱՅՑԵԼԵՑ ՅՈՅՆ ՈՒՂԱՓԱՌՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Հայկապետութեան միւլթի շէյխ Մոհամէտ Ռաշիտ Քապպանի երէկ այցելեց Պէյրութի յոյն ուղղափառներու առաջնորդարան, ուր տեսակցութիւն մը ունեցաւ Հակիմ Դ. պատրիարքին հետ, ներկայութեամբ առաջնորդ Էլիաս Աւուտիի եւ տղք Մըրթիի:

Միւլթիին հաւաստեց, որ Լիբանանի մէջ սուրիական ներկայութիւնը օրինական է:

Շէյխ Քապպանի հանդիպումէն ետք նաեւ ըսաւ, որ սուրիական ներկայութեան հարցը ունի միջ-պետական բնոյթ եւ հանրապետութեան նախագահն ու կառավարութիւնը վճռած են այս հարցը, հետեւաբար անիկա պէտք է արժարժուի հասկոթեան կողմ:

Ան նաեւ ըսաւ, որ Պըրբեյի հետ քննարկած չկայ եւ քարձր կը գնահատէ Սֆէյր պատրիարքն ու մարտի եպիսկոպոսներու խորհուրդը:

Ան նաեւ յայտնեց, որ Հակիմ պատրիարքին հետ համաձայն գտնուած են լիբանանցիներու միութեան համակցութեան եւ ազգային սկզբունքներուն շուրջ, զորս պէտք է ամրապնդել:

Հակիմ պատրիարք ըսաւ, որ ընդունելի է, որ այս երկրին քաղաքացիները օտարականի վզացում ունենան, որովհետեւ այս հարցնիքը բոլորին է:

Հարցումի մը պատասխանելով, Հակիմ պատրիարք ընդգծեց, որ Երուսաղէմի հարցը շատ կը հետաքրքրէ քրիստոնէաները, որոնք նախանձախնդիր են, որ Երուսաղէմը մնայ քրիստոնէաներուն եւ իսլամ եղբայրներուն քաղաքը, որ կը գտնուին երկու դոսններու սրբութիւնները: Ան նաեւ փորակցութիւն յայտնեց ինքիֆա-տային եւ Երուսաղէմի համար մղուող պայքարին:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ ՎԱՆԱՅ ԶԱՅՆ

Շաքարախտի Համաշխարհային Օրուան եւ ԼՕՆԻ կազմակերպած արեան շաքարի անվճար քննութեան առիթով՝ Այսօր ժամը 12:30ի հայերէն լուրերէն ան-միջապէս ետք

ՈՒՆԿՆԳԻՅԵՒՔ ՀԱՐՅԱԶՐՈՅՑ ՄԸ՝

ՄՐՏԱԲԱՆ ՏՈՔԹ. ՍԵՒԱԿ ՔԷՇԻՇԵԱՆԻ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՐՄԼԻ ՄԱՍՆԱԳԷՏ ՏՈՔԹ. ՌԱԶՄԻՎ ՈՍԿԵՐԻՉԵԱՆԻ ԵՒ ԼՕՆԻ «ԱՐԱՔՄԻ ՊՈՒԼՂՈՒՐՃԵԱՆ» ԿԵԴՐՈՒՆԻ ՏԱՐԱՎԱՌԻՍԱՐԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՐ ԳՐԱ. ԳՕԳՕ ԱՆՈՉԵԱՆԻ ՀԵՑ:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ազատուհի Հրեշտակեան Տէր եւ տիկին Յարութիւն Հրեշտակեան Տէր եւ տիկին Լեւոն Հրեշտակեան եւ զաւակունք Տիկին Արաքսի Թապազեան Տէր եւ տիկին Գրիգոր Զիլիթեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Արտաշէս Գազանճեան եւ զաւակունք Տիկին Ալիս Արթիւնեան եւ զաւակունք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր եւ հարազատին՝

ՍԱՐԳԻՍ ՀՐԵՇՏԱԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 21 Նոյեմբեր 2000, Քանաթայի մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը եւ թաղու-մը կատարուեցան Քանաթայի մէջ:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուց-եալին եղբոր՝ Լեւոն Հրեշտակեանի բնակարանը, Արաքս փողոց, Երկուշաբթի 27 եւ Երեքշաբթի 28 Նոյեմբերին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ռահէլ Եազուպեան Տիկին Ժանէթ Հարպոյեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Ժողէֆ Եազուպեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Անթուան Եազուպեան եւ զաւակունք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, աներհօր եւ հարազատին՝

ՅԱԿՈՔ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ

(Ծնեալ՝ Մարտ, 1921ին)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 23 Նոյեմբեր 2000, յետ կարճատեւ հիւանդութեան:

Թաղման արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 24 Նոյեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուց-եալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուց-եալին բնակարանը, Պուրճ Համուտ, Հարպոյեան շէնքեր, Ա. պող:

ԴԱՄԱՍԿՈՍ – ՊԵՐՔԷ ՖՈՒՏ ՊՈՒԹՐՈՍԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԿՈՂՋՈՒՆԵՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԶՄԱԹԻ ԱՆՁՆԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախկին նախարար Ֆուադ Պուլթրոս երէկ հաստատեց, թէ միջնորդութիւն կ'ընէ Դամասկոսի եւ Պէրբեյի միջեւ, մինչ քաղաքական բազմաթիւ անձնաւորութիւններ ուղղուեցին անոր ճիգերը:

Պուլթրոս երէկ այցելեց Պէրբեյի եւ մարտնիներու Սֆէյր պատրիարքին հետ տեսակցելու ետք յայտարարեց, թէ Սուրիոյ նախագահ Պաշչար Ասատի եւ լիբանանեան կողմերու հետ իր հանդիպումները միջնորդութիւն չեն, «այլ ճիգեր, զորս կը կատարենք եւ ինչպէս նաեւ ուրիշներ, գտնելու լուծումներ, Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ ապականած միջնորդութիւն»:

Պուլթրոս ըսաւ, որ Դամասկոս իր այցելութիւնը արտայայտութիւններէն էր երկու կողմերու հանդիպման փափաքին եւ ան-մէջ մեկնելով տեսակցած է Սֆէյր պատրիարքին հետ: Ան ընդգծեց, որ «տազնապը» ունի երկու հիմնական երեսներ. նախ լիբանանեան ազգային երկխոսութիւնն ու հաշտութիւնը, իսկ երկրորդը՝ Սուրիոյ հետ մասնաշա-տուկ յարաբերութիւններն ու անոնց պահպանումը: Թաէֆի համաձայ-նագրի ճշգրիտ գործակ-

տի այցելէ այն ատեն, երբ կը կարծէ, թէ նման քայլ օգտակար պիտի ըլլայ: «Հարցը կ'ոճակ մը կոխել է, այլ պէտք եղած միջնորդութիւնը ստեղծել», ըսաւ ան:

Երէկ Պէրբեյ այցելեցին նաեւ երեսփոխաններ Ամին ժեմայէլ եւ Նամ-թալա Ապի Նասրը:

Ապի Նասրը նկատել տուաւ, որ Սֆէյր պատրիարքին հաստատ կեց-ւածքը սկսած է տալ արդիւնքներ ներքին բեմին վրայ, ուր սուրիական ներկայութիւնը առանց վախի սկսած է արժար-ճուկի քաղաքագէտներու կողմէ: Ան նաեւ ողջունեց Ֆուադ Պուլթրոսի տարած աշխատանքը:

Նախկին նախագահ Ամին ժեմայէլ երէկ Ֆրանսայի դեսպան Յիլիֆ Լըքուրթիէն ընդունեց ետք կող ուղղեց «չինիչ, առաւելապէս կը իրա-պաշտ երկխոսութիւնն ունենայու Սուրիոյ հետ, հի-մը ղեկու համար ամուր յարաբերութիւններու, որոնք կը պահպանեն իւ-րաքանչիւր Յիլիֆի իւրա-յատկութիւնը, արժանա-պատուութիւնը, գերիշ-խանութիւնը եւ անկա-խութիւնը»:

Ժեմայէլ յոյս յայտնեց, որ նախագահ Ասատի եւ նախկին նախարար Պուլթրոսի հանդիպումը սկիզբը կը դառնայ իսկական երկ-խոսութեան, որմէ ոչ ոք կը բացառուի: Ան համո-զում յայտնեց, որ Պուլթրոս «կրնայ շինիչ կար-ճիքներ բերեղացնել այս հարցին առնչութեամբ»: Ժեմայէլ պահանջեց բոլոր ուժերու մասնակցու-թիւնը այս երկխոսու-թեան:

Միւս կողմէ, տեղեկա-տուութեան նախարար Ղազի Արիտի կառավար-րութեան երէկուան ժողո-վէն ետք թղթակցեցերուն

հարցումներուն պատաս-խանելով ըսաւ, որ կառա-վարութիւնը մեկնելու է մաճի ղրական նախաձեռ-նութիւն, որ կը նպաստէ արժարժուած հարցերու լուծումին:

Նախկին նախարար Պուլթրոսի Դամասկոս – Պէրբեյ գիծին վրայ շար-ժումին մասին հարցումի մը պատասխանելով ան նաեւ ըսաւ, որ կառավար-րութիւնը մեկնելով իր սկզբունքային կեցուածք-ներէն, զօրավիզ կը կանգ-նի ամէն քայլի, որ կրնայ ամրապնդել ազգային միասնութիւնը: Ան ընդգծեց, որ տեղի ունեցող բոլոր հարցը-րակցութիւնները հրապարակային չեն ու երեւան չեն գար: Ան յայտնեց, թէ բազմաթիւ հաղորդակ-ցութիւններ տեղի կ'ունե-նան եւ մաղթեց, որ բոլոր-րը կը գործակցին ի շահ Լիբանանի:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կանազգայինի Կեդրոնական Վարչութիւնը կը տեղեկացնէ, որ Նշան Փալանճեան Ճեմարանի ուսանողական գիշերօթիկոցնց ներս գոյութիւն ունին սահմանափակ թիւով սեռեակներ, որոնք մատչելի գիներով վարձու կը տրուին հայ ուսա-նողներու:

Շտաբըրրուողներն կը խնդրենք անձամբ ներկայանալ Կանազգայինի Կեդրոնական Վարչութեան գրասենեակ (Նշան Փալանճեան Ճեմարան) եւ կամ հեռաձայնել 01-372455, 03-549917 թիւերուն:

ՀԱՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանու ՇՇ դեսպանութիւնը մասնակցում է «Պուլթրոս» հիւրանոցի կազմակերպած «Աշ-խարհի սեղան» ցուցահանդեսին, որը տեղի կ'ու-նենայ Ուրբաթ, 24 Նոյեմբերի ժամը 18:00ից, եւ Շաքար եւ Կիրակի՝ 25 եւ 26 Նոյեմբերի ժամը 12:00ից մինչեւ 21:00 «Պուլթրոս» հիւրանոցի «Crystal Garden» սրահուն:

Սուրճը ազատ է: Հ Հ ԴԵՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍՈՒՆԻ ԸՆԴՈՒՅՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1700 ԱՄԵՆԱԿ 1700 ԱՄԵՆԱԿ

ԵՐԳԵՀՈՆԱՅԻՆ ԵԼՈՅԹ

ԱՇԽԱՐՀԱՌՉԱԿ ԵՐԳԵՀՈՆԱՀԱՐ ՊԵՐՃ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ Հրաւերով՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, Ուրբաթ, 24 Նոյեմ-բեր 2000, երեկոյեան ժամը 8:30ին:

Կը հրաւիրենք ձեզ ներկայ գտնուելու այս եպակի համերգին:

ՄԻՔԱՅԷԼ ԷԼԱՍԺ ԸՆԴ ԵՐԻՍԹԻՆ ԵՄԻՐՉԵԱՆ

Ամուսնացեալք

10 Սեպտեմբեր 2000, Պէյրութ

Հ. Ե. Մ ՀԱԼԷՊ

Հովանաւորութեամբ Բերիոյ թեմի առաջնորդ ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ

ՈԳԵԿՈՉՈՒՄ ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՐՏԻԿ ԿԱՐԳԻՍ ԶԷՅԹԵԱՆԻ

(ՆՈՒԻՐՈՒՄՆԵՆՆԱԿԱՎՈՒԹԵԱՆ 15ԱՄԵԱԿԻՆ)

Տեղի կ'ունենայ Կիրակի, 26 Նոյեմբեր 2000, երեկոյեան ժամը 8:00ին, «Ա. Ահարոնեան» սրահուն ներս, Մալիպէ, Կալէպ:

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԸ...

Թ) Համաձայնութիւն տրուեցաւ նոյն խորհուրդին տեղեկագիրի կարգ մը կէտերուն, որոնք կը վերաբերին կեդրոնական շուկաներու ծրագրի անկախ հարցերուն: Ժողովը պատկան մարմիններէն պահանջեց շարունակել տեղեկագիրի քննարկումը եւ այդ հարցերուն գծով առաջարկներ ներկայացնել կառավարութեան: Օրակարգի վրայ նշուած այս հարցերուն կողքին ժողովը որոշեց պետական վարչամեքենայի բարեկարգումներու հարցերու պետական նախարարի փոխարէն անոր տալ «վարչական բարգաւաճման» հարցերու պետական նախարար անունը եւ նախարարէն պահանջեց պատրաստել ուսումնասիրութիւն մը՝ պետական նախարարութեան աշխատանքներուն եւ պայն լիարժէք նախարարութիւն դարձնելու շահեկա-նութեան մասին:

Ժողովին ետք, տեղեկատուութեան նախարար Արիտի յայտնեց, որ ժողովին բացակայ էին նախարարներ Պըշարա Մըրիէժ, Ասատ Տիպա եւ Սեպուհ Յովսէփեան:

Թրթակիցներու հարցումներուն պատասխանելով Արիտի ընդգծեց, թէ մաքսատան օրէնքը մաքսատուրքերէն տարբեր է եւ ողջունեց Պէրբեյի եւ Դամասկոսի միջեւ միջնորդութիւնները:

Նախարար ըսաւ, որ ինք կը հետեւի «Թէյէ Լիպան»ի վիճակին եւ անոր գծով որոշումները պիտի տրուին ու յայտարարուին յարմար ատե-նին: «Սուրիացի ուսանողներու հարցը չար-ժարժուեցաւ, բայց վարչապետ Հարիրի Դամասկոս այցելութեան միջոցին այս հարցերուն լուծումներ տուող համաձայնութիւններ ստորագրուեցան, որ նկատի առնուած են լիբանանեան շահերը», ըսաւ ան:

«ՄԱԿԻ կողմէ Մապարէի Շրպայի լիբանա-նապատկան ըլլալու մասին սուրիական փաս-տաթուղթի մերժումը Լիբանանի վրայ ճնշումի ձեւ է, թէեւ Սուրիա Լիբանանի ազգային շահե-րուն համար այս քայլին դիմեց, բայց Լիբանան կը մնայ թիրախ՝ ճնշումներու, որոնք չենք կրնար փոխել մեր կեցուածքը. պիտի չպիշինք մեր իրաւունքներէն եւ պանոնք պիտի հե-տապնդենք մանաւանդ դիւանագիտական մի-ջոցներով», ըսաւ Արիտի:

«Բանակին հարաւ առաքումը մերժելու Լիբա-նանի որոշումին նկատմամբ անբիկեան եւ եւ-րոպական հասկացողութիւն կայ», ըսաւ նախարար. նկատել տալով, որ Մապարէի Շրպան բռնագրաւուած կը մնայ, իսրայէլեան բանտե-րու մէջ լիբանանցիներ կան, ինչպէս նաեւ Իս-րայէլի պատճառած վնասներու հատուցման, պաղեստինցի գաղթականներու տունդարձի եւ Կոլանի բռնագրաւումի հարցերը կը մնան առ-կայի:

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գրատան կողմէ կազմակերպուած Հարգիր-քի վեղ - վաճառք ցուցահանդէսի վիճակա-ձգութեան շահող թիւն է՝ 6962: Կը խնդրուի շահող թիւին ներկայանալ Կաթողիկոսարանի Գրատան ստանալու հա-մար մեծ պարգէ՛ւ Համակարգիչը ԳՐԱՏՈՒՆ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲՈԼԷՃ

Նախագահութեամբ՝ Լիբանանի Հանրապետութեան Առաջին Տիկին ՍԻԿԻՆ ԱՆՏՐԷ ԼԱՇՈՒՏԻ

ԵՐԳԱՀԱՆԴԷՍ ՎԻԳԷՆ ԴԱՐԲԻՆԵԱՆԻ

Դաշնակի ընկերակցութեամբ ՓԱԹՐԻՍ ՓԷՐԻԷՐԱՍԻ

Շաքար, 2 Դեկտեմբեր 2000, երեկոյեան ժամը 8:00ին, Պէյրութի Ամերիկեան համա-լսարանի «Էսեմպլի Շոլ»-ին մէջ: Տոմսերը կարելի է ապահովել - Դարբնի գրասենեակէն. հեռ. եւ ֆաքս 01-34916: - «Գարին» հաստատութենէն. Պուրճ Համուտ, հեռ. 01-266414: - Սիբի Սթըյընըրիէն, Չալքա: - Կը խնդրուի տոմսերը նախօրոք ապահովել: ●Սրահին դռները պիտի փակուին ճիշդ ժամը 8:00ին:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՀԱԼԷՊ ՀԱՌՈՒՐՏ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒ-ԹԵԱՆ խնամակալութիւնն ու տնօրէնութիւնը կը հրահրեն ձեզ հոգեհանգստեան պաշտօնի, հան-գուցեալ բարերարներուն՝ ՄիշԲԱՆ, ԶԱՊԷԼ, ԼԷՅԼԱ եւ ՀԱՌՈՒՐՏ ԳԱ-ՐԱԿԷՕԶԵԱՆՆԵՐՈՒՆ յիշատակին:

Պիտի պատարագ եւ պիտի քարոզէ՝ ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ (Բարեջան Առաջնորդ Բերիոյ թեմի)

Կիրակի, 26 Նոյեմբեր 2000, առաւօտեան ժա-մը 10:00ին, Արքեպիսկոպոսական Մանկանց եկեղեց-ւոյ մէջ, յաւարտ. Ա. պատարագի: Սիրով կը հրահրենք բոլոր անոնք, որոնք կը փափաքեն յարգել մեր բարերարներուն յիշա-տակը:

ՎԱԼԵՆԹԻՆ ՓԱՆԻԱԿՈՒԱՎ ՓԵՐՈՒԻ ՆՇԱՆԱԿԵԱԼ ՆԱԽԱԳԱՀ



Փանիակուա

Փերուի խորհրդարանը փոխանցման հանգրվանի նախագահ մը նշանակեց երկրին՝ պաշտօնակն ընելէ ետք նախկին նախագահ Ալպերթո Ֆուլիմոնի: 64 տարեկան Վալենթին Փանիակուա ըսաւ, որ իր կառավարութեան առաքելութիւնը պիտի ըլլայ երկիրը առաջնորդել դեպի Ապրիլի նախագահական ընտրութիւններ: Փանիակուա անմիջապէս վարչապետ նշանակեց ՄԱԿի նախկին ընդհանուր քարտուղար Կարլոս Ֆերէս Տէ Բուէլարը, որ պիտի կազմէ միասնականութեան եւ ազգային հաշտութեան կառավարութիւն:

Փերուի խորհրդարանը Փանիակուան նշանակեց, մերժելէ ետք Ֆուլիմոնի իրաւարկանը, զոր ուղարկած էր Թոքիոյէն: Խորհրդարանը յայտարարեց, որ Ֆուլիմոնին պաշտօնակն ըրած է:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ ՈՉ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ ԵՒՍ ԱԶԱՏ ՊԻՏԻ ԱՐՁԱԿՈՒԻՆ

Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ հրապարակեց օրէնք մը, որուն հիման վրայ պատ պիտի արձակուին ոչ քաղաքական բանտարկեալները, յայտնեց նախագահական բանքեր ժըպրան Բուրիէ: Մէկ շաբաթ առաջ, Ասատ հրահանգած էր պատ արձակուիլ վեց հարիւր քաղաքական բանտարկեալներու: Քուրիէ յայտնեց նաեւ, որ Ասատի հրապարակած օրէնքը Երեքշաբթի օր միաձայնութեամբ մատերացուած էր խորհրդարանին 250 անդամներուն կողմէ: Յիշեալ օրէնքին հիման վրայ պատ պիտի արձակուին գողութեան, երթելէ կի օրէնքներու խախտումի եւ այլ յանցանքներու համար դատապարտուած բանտարկեալները: Ներումի օրէնքին պիտի չօգտուին թմրեցուցիչի մաքսանենգութեան եւ ոստիկանութեան դէմ դնելու համար բանտարկուածները: Օրէնքը կը նշէ, որ տնտեսական մարզի ոճիրներու համար դատապարտուած բանտարկեալներուն բանտարկութեան ժամանակաշրջանին մէկ երրորդը պիտի ջնջուի, իսկ անոնք, որոնք ապօրինի միջոցներով գումարներ առած են քաղաքացիներէն (շահարկման պատրուակով), պատ պիտի արձակուին, պայմանաւ որ դրամը ամբողջութեամբ վերադարձնեն մէկ տարուան ընթացքին:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԹՈՒՐԸՐԻԱ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ
**ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՒ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ**

ԱՆԳԱՐԱ, 23 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրքիոյ ընդհանրապէս գլխաւոր կուսակցութիւնը՝ իսլամական Առաքինութիւն Կուսակցութիւնը, Հինգշաբթի օր կառավարութեան գործունէութիւնը դատապարտող բանաձեւ մը ներկայացուցած է խորհրդարանին, դրամատնային գայթակղութեան մը գծով անոր տնօրինումներուն առնչութեամբ: Սակայն անհաւանական կը նկատուի, որ անիկա կարենայ բաւարար Կորակցութիւն ապահովել բանաձեւը վաերացնել տալու համար խորհրդարանին մէջ, որ կառավարական ընկերակցութեան երեք կուսակցութիւնները տիրական են: Ըստ թրքական լրատու աղբիւրներու, Պոլսոյ մէկ ատեանը ձերբակալման 40 հրամանագիրներ արձակած է բարձրաստիճան գործարարներու եւ նախկին քաղաքական առնուազն մէկ անձնատիրութեան դէմ, յիշեալ գայթակղութեան հարցով:

Թուրքիա ճնշումի արշաւի մը ձեռնարկած է դրամատնային մարզին մէջ փտածութեան վերջ տալու համար: Փոքր 10 դրամատուներու գործունէութիւնը կասեցուցած է: Հետաքննութիւններ ցոյց տուած են անոնց մէկ քանիին կապուած փտածութիւն եւ վատ տնօրինում, որոնք ելեւմտական շուկաները ցնցած են:

ՌՈՒՄԻԱ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԿԸ ԾՐԱԳՐԵ

Ռուսիոյ պաշտպանութեան նախարարութիւնը Չորեքշաբթի օր յայտնած է, թէ հարաւարեւմտեան գոտիին մէջ Կեդրոնական Ասիոյ դէմ յանդիմանումներ պիտի կուտակէ, տեղական պատերազմներով վրադնելու համար: «Ինքզրքաքս» լրատու գործակալութիւնը հաղորդած է, որ այդ քայլին նպատակը նաեւ ՕԹԱՆի ցոյց տալ է, թէ Ռուսիա պատրաստ է գործնական քայլերու դիմելու: Երկուշաբթի օր, նախագահ Վլատիմիր Փութին բարձրաստիճանի վիճակով հրամանատարներու յայտնած է, թէ նման յարցերու դիմումները պիտի քննարկուին, որոնք պիտի քննարկուին իրարմէ: «Նոյն բանը պիտի ըլլայ Կեդրոնական Ասիոյ ուղղութեամբ», յայտնած է ան, հաստատելով, որ Փութինի առաջարկը այժմ դեկլարութեան մէկ որոշումը դարձած է: Ըստ «Ինքզրքաքս»ի, բանակային սպաններ յայտնած են, թէ նպատակը թափ տալ է պաշտպանութեան միջոցառումներուն, մինչ ՕԹԱՆ կը փորձէ Արարչական եւ Վրաստանի հետ յարաբերութիւնները բարելաւել, ինչպէս նաեւ՝ Կեդրոնական Ասիոյ մէջ իսլամական հաւանական ծայրայեղականութեան դէմ պաշտպանուիլ է: (ՌՈՅԹԸՐԸ)

ՏՆԻԵՍԹԸՐԻ ՀԱՐՅՈՎ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆԵԼԻ ՄԱՏՆՈՒՄԾ ԵՆ

Երոպայի մէջ Գործակցութեան եւ Ապահովութեան Կազմակերպութիւնը շաբաթակից յայտնած է, թէ Մոլտովայի անջատողական Տնիեսթըրի շրջանին միջեւ տագնապին: Անիկա խորհրդային վարչակարգին տապալումէն առաջ՝ 1990ին, անջատուած էր: Տնիեսթըրի պաշտպանը կը վստահայի, որ Մոլտովայի ծագումով ռումանացի բնակչութիւնը Ռումանիոյ միանալու ճիգ պիտի թափէ: Ո՛չ Մոլտովա, ո՛չ Ռումանիա այսօր լրջօրէն միացման մասին կը մտածեն: (ՌՈՅԹԸՐԸ)

ՓՈՒԹԻՆ ԿԸ ՇԵՇՏԵ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՈՒԺԵՂ ՅԱԿԱԿՇԻՌ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Նախագահ Վլատիմիր Փութին Չորեքշաբթի օր նոր Պետական Խորհուրդին բացումը կատարած է, սակայն ան կուշտացուցած է երկար ժամանակ ուժեղ հանդիսացած շրջանային ղեկավարները, որոնք անդամ են խորհրդատու մարմինին, թէ պէտք չէ մարտահրաւէր ուղղել իր կառավարութեան իշխանութեան դէմ: Կրեմլինի մէջ արտասանուած խօսքի մը մէջ, Փութին դարձեալ յայտնած է, թէ անհրաժեշտ է կեդրոնական ուժեղ հակակշիռ ունենալ եւ յստակ դարձուցած, թէ Պետական Խորհուրդին զիջաւոր պարտականութիւնը շրջաններուն մէջ իր քաղաքականութիւնը գործադրելու միջոցներ գտնել է: Ծարք՝ էջ 10

**Մ. Բ. ՍՄԻՍՆԻ ԿՐՈՆԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՅ
ՀԱՄԱՐՆԵՐՈՒՄ**

Նախագահութեամբ՝
**ԳԵՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ
ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ**
(Քանադայի թեմի Հայոց առաջնորդ)

**ՆԿԱՐՁԱԿԱՆ
ԵՒ ՄԱՆՐԱՆԿԱՐՁԱԿԱՆ
ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՍՏԱԿԱՆՈՐ
ԱՐՈՒԵՍԱԳԵՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐՈՒՆ
Կազմակերպուած՝
**ՀԱՅ ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
«ՄՈՄԻԿ» ՄԵՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵ
1700 ԱՄԵՐԻԿԱՆ ԱՌԻՈՎ**

Բացումը տեղի կ'ունենայ Ծաբաթ, 25 Նոյեմբեր 2000, երեկոյեան ժամը 6:00ին, «Տեմիսթեան» կեդրոնի ցուցասրահին մէջ եւ կը շարունակուի Կիրակի օր ժամը 10:00էն 1:00 եւ երեկոյեան՝ 17:00էն 21:00:

ՀՐԱԵՐ ԲՈԼՈՐԻՆ

ՐՍ ԱԼ ՏԵՐԻՈՅ ԵՒ ՔԱՌԱՐԻ ՔԱՐԻԳԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒՆ

ՕՓԷՔ ՊԻՏԻ ՆՈՒԱԶԵՅՆԵ ՔԱՐԻԳԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Քաթարի եւ Ալճերիոյ քարիղի նախարարները հաւանական նկատեցին, որ 2001ի Մարտին ՕՓԷՔ պիտի նուազեցնէ քարիղի արտադրութիւնը, որովհետեւ միջազգային շուկան ողողած պիտի ըլլայ: Ալճերիոյ քարիղի նախարար Շեքիպ Խալիլ ըսաւ, որ քարիղի արտադրութիւնը պահանջուածէն աւելի է եւ թէ ՕՓԷՔի բոլոր անդամները համաձայն են այս տեսակէտին: Խալիլ կը խօսէր Քաթարի իր պաշտօնակիցին՝ Ապտալլա Պրն Համատ Աթիայի հետ: Աթիա իր կարգին ըսաւ, որ ներկայիս միջազգային իր պահանջէն երկու միլիոն տակառ աւելիով ողողուած է: Մարտին, երկու միլիոնը 3,7 միլիոնի պիտի բարձրանայ: Ան աւելցուց, որ ՕՓԷՔ պէտք է նուազեցնէ արտադրութիւնը 2001ի երկրորդ եռամսեայէն առաջ: Աթիա յիշեցուց, որ այս տարուան ընթացքին, ՕՓԷՔ չորս անգամ բարձրացուցած է քարիղի արտադրութիւնը՝ օժանդակելու համար սակերու անկումին: (ՌՈՅԹԸՐԸ)

ՍՈՒՐԻԱ ԶԻ ԾՐԱԳՐԵՐ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՅԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԸ

ՎՐՍԵ ՆԱԽԱՐԱՐ ՉԱՅԻՄ

Սուրիա չի ծրագրեր սեփականաշնորհումներու ենթարկել պետական մարզը, նախընտրելով անոր բարեկարգումը, յայտնեց ծրագրումի նախարար Իսամ Չայիմ: Չայիմ, որ կը խօսէր Սուրիոյ տնտեսական ծրագիրներուն մասին, յայտնեց, որ կառավարութիւնը պիտի շարունակէ զօրավիգ կանգնիլ սեփական մարզին, որ սկսած է աւելի մեծ դերակատարութիւն ունենալ երկրին տնտեսական բարգաւաճման մէջ: Ան աւելցուց, որ կառավարութիւնը որդեգրած է օրէնքներ՝ զօրացընելու սեփական մարզն ու անոր դերակատարութիւնը: Չայիմ, որ ծրագրումի նախարարութիւնը ստանձնած է Ապրիլին, կը նկատուի կառավարութեան եւ տնտեսական ու վարչական բարեկարգումներու ծրագիրներուն մշակման կարելոր դերակատարներէն մէկը: Չայիմ դիտել տուաւ, որ արաբական կարգ մը երկիրներ գործադրութեան դրած են սեփականաշնորհումի ծրագիրներ, որոնք թելադրուած են Համաշխարհային Գրամատան կողմէ: Ան շեշտեց, որ Սուրիա այսպիսի ծրագիրներ պիտի չմշակէ, որովհետեւ կառավարութիւնը կ'ուզէ բարելաւել եւ ոչ թէ վայն գոյութեան ջնջել: Չայիմ աւելցուց, որ պետական մարզն ու սեփական միասնաբար պիտի գործեն նպաստելու համար տնտեսութեան բարգաւաճման: Չայիմ կը նախատեսէ, որ կառավարութեան որդեգրած քաղաքականութեան արդիւնքը պիտի տեսնուի մօտիկ ապագային: Տնտեսական աղբիւրներ եւ մասնագէտներ կ'ըսեն, որ ճարտարարուեստի մարզը միլիոնաւոր տոյարներու վնաս կը պատճառէ կառավարութեան, որովհետեւ արտադրութիւններուն մեծ մասը սպառումի շուկայ չունի եւ դիպուած կը մնայ: Պաշտօնական մամուլը վերջերս կոչ ուղղած էր կառավարութեան՝ ջնջելու պետական մարզը: Չայիմ դիտել տուաւ, որ պետական մարզի բարեկարգումներու ծրագիրները պէտք է նկատուի ունենան կարգ մը շահաբեր մարզեր եւ Կանոն պահպանել, բարելաւել եւ բարգաւաճ դարձնել: Իսկ ոչ շահաբերներն ալ պէտք է վերատեսութեան ենթարկուին եւ Կանոն շահաբեր դարձնելու ուսումնասիրութիւններ կատարուին: (ՌՈՅԹԸՐԸ)

al-mashrek
INSURANCE & REINSURANCE S.A.L.

Պուրճ Համուտի մասնաճիւղի
հեռաձայնի թիւերն են.
(01)258228 – (01)268808
Fax: (01) 258223

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ.

❖SONY	❖GENERAL ELECTRIC
❖TOSHIBA	❖WHITE WESTINGHOUSE
❖PANASONIC	❖KELVINATOR
❖SHARP	❖HOOVER
❖PHILIPS	❖BOSCH
❖SAMSUNG	❖MOULINEX
❖PIONEER	❖BRAUN
❖MEC	❖MIELE

**ՎՃԱՐՄԱՆ ԳԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ
36 ԱՄՍՈՒԱՆ ՎՐԱՅ
LISTE DE MARIAGE**

Պուրճ Համուտ - Զաղաքապետարանի հրապարակ, Հեռուգրք՝ 01-241000
Չոր մուտք, Յանքըր Պանքոյէ: Կանադայի ապահովում:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 110ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

«Երկիր» օրաթերթը իր 18 Նոյեմբերի թիւով յայտնած է, թէ Հ. Յ. Դաշնակցութեան 110ամեակի նուիրած ձեռնարկներու շարքին Երեւանի Հ. Յ. Դ. «Կոմիտաս» կոմիտէի թիւերը եւ թիւ 145 դպրոցի ուսուցիչները կազմակերպած են տօնակատարութիւն մը, որուն ընթացքին խօսք առած է Հայ Դատի նուիրեալ Անդրանիկ Պօլոսեան, որ ձեռնարկը նկատած է «ուխտի նորոգում»:

Ձեռնարկի ընթացքին խօսք առած է նաեւ Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամ Արտաշէս Շահրազեան, որ ըսած է. «Դաշնակցութիւնը եղած է Հայ ժողովուրդի քաղաքական պայքարի արդիւնքը: Երբ ի պատասխան թրջական ճնշումներու, սկիզբ առաւ հայկական ազատագրական շարժումը, Դաշնակցութեան այլ բան չէր մնար, բացի այդ շարժումին բեռը կրելէն»:

ԾՈՎԱԳԻՒՂԻ ՀԻՄՆԱԴԻՐՄԱՆ 170ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ

18 Նոյեմբերին Գեղարքունիքի մարզի Ծովագիւղ գիւղը, որուն բնակչութեան թիւը անցած է 5 հազարի սահմանագիծը, նշեց իր հիմնադրման 170ամեակը:

Ծովագիւղը Հայ գրականութեան մէջ յիշատակած Զիրուխուն է, զոր հիմնադրած են կողովիտ գաւառի պատմական Արծափ գիւղէն 1830 թուականին Սեւանի աւազանին մէջ վերարձակուած 70 հայ ընտանիքներ:

Գիւղապետ Գէորգ Թովմասեանի համաձայն, Ծովագիւղը Հայաստանի այն բացառիկ բնակավայրերէն է, ուր արտագաղթի արիւնք երբեք չէ հասած, եւ բնակչութեան թիւը կը շարունակէ համաչափօրէն աճել:

ՆՇՈՒԵՑԱԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՊՂՆԶԱԶՈՒԼԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴԻՐՄԱՆ 230 ԱՄԵԱԿԸ

20 Նոյեմբերին Ալավերդի մէջ նշուեցաւ Լոռիի պիւնձի արտադրութեան հիմնադրման 230 ամեակը: Մետաղաձուլական գործարանի յորելանին նուիրուած հանդիսութեան ընթացքին հրապարակեցան Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի եւ վարչապետ Անդրանիկ Մարգարեանի շնորհաւորական ուղերձները: Ներկաները ողջունեցին «Մանէս - Վայքաթի» գլխաւոր տնօրէն Վալերի Մեջլումեան, Լոռիի մարզպետ Հենրիկ Քոչինեան, Հայաստանի արդիւնաբերութեան եւ առեւտուրի նախարար Կարէն Ճշմարիտեան, արտասահմանէն եկած հիւրեր, գործարարներ եւ մտաւորականութեան ներկայացուցիչներ:

Նոյն օրը զրուեցան 16 հիմնադրերը այն եկեղեցւոյ որ պիտի կառուցուի գործարանին կից: Եկեղեցւոյ հիմնարկէն հոգեւոր արարողութիւնը կատարեց Փառէն եպօ. Աւետիքեան, իսկ բակին մէջ հաստատուած խաչքարը (հեղինակ՝ վանաձորցի խաչքարագործ Սերգէյ Դանիէլեան) օձեց Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպօ. Չուլիեան:

1700ԱՄԵԱԿԻ ԱՌԻՈՎ

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ ՀԱՇՈՒԱՌՄԱՆ Կ'ԵՆԹԱՐԿՈՒԻՆ 1700ԱՄԵԱԿԻ ԱՌԻՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼՈՂ ԶԲՕՍԱՇՐՋԻԿՆԵՐՈՒ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի տօնակատարութեան կազմակերպման պետական յանձնարարութեան յայտարարութիւնը մը հրատարակած է Երեւանի Կեդրոն եւ Արարիկի հասանելիութեան եւ հանրապետութեան այլ քաղաքներու՝ Վանաձորի, Գիւմրիի, Աշտարակի, Դիլիջանի, Գորիսի, Սիսիանի, Թաղիսի, Եղեգնաձորի, Ջերմուկի, Սեւանի, Գաւառ - Մարտունիի եւ Արուսեան - Արգիշի մէջ բնակարաններու եւ առանձնատուներու հաշտարման մասին՝ զանգձ 2001 թուականին Հայաստան այցելող զբօսաշրջիկներուն տրամադրելու համար:

Յանձնարարութեան համաձայն, այդ կացարաններու ընտրութեան համար ստիպողական պայմաններէն են՝ բնակարաններու վերանորոգումը վիճակը, բարեկարգութեան ու մարտի առողջապահական հանգոյց տաք եւ պաղ ջուրի մատակարարումով, սառնարանով եւ անհրաժեշտ սարքերով օժտուած խոհանոցը, կահուորուած անջարանը եւ հիւրասենեակը: Պարտադիր է նաեւ սրբիչներու, անկողնի ծածկոցներու եւ այլ առաջնահերթ իրեղէններու առկայութիւնը:

Գիտումներու ընդունման վերջին պայմանագրով սիւնը 16 Կեղեկներէն է:

ՊԱՏՈՒԱՍՏՈՒՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՕԺԱՆԴԱԿԵ ՆԱԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Մամուլներու պատուաստումներու աշխատանքները հետապնդող ՄԱԿԻ մէկ նախաձեռնութեան կազմակերպիչները սկսած են լեղրատապի (նե: փաթիլիս ՊԻ) եւ այլ հիւանդութիւններու դէմ պատուաստումի երկրորդ շրջանը:

Այս ծրագրին յատկացուած աւելի քան հարիւր միլիոն տոլարը պիտի օգտագործուի Աֆրիկէի, Ասիոյ, Եւրոպայի եւ Լատին Ամերիկայի մէջ պատուաստումի արշաւներ իրականացնելու, յայտնած է Պատուաստութեան եւ Դիմադրողականութեան Համաշխարհային Դաշնակցութիւնը (GAVI):

Ծրագրին հիմնադրամէն օգտուող երկիրներուն շարքին են՝ Հայաստան, Հայիթի, Փոլսկրեայ Ափունը, Փաքիստան, Ռուանտա եւ Ուկրաինա: Նախաձեռնութեան կազմակերպիչները Սեպտեմբերին սկսած են օգտագործել իրենց հիմնադրամին առաջին 150 միլիոն տոլարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ՝ ԴԻՄԱԾՆՕՏԱՅԻՆ ՅԱԶՈՂ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի առողջապահութեան ազգային հիմնարկի դիմաձեռնարկի վերաբերութեան ղարմանատան մէջ վերջերս կատարուած է այս տարուան երրորդ վերաբերութեանը, որ նախորդներուն նման, շատ յաջող արդիւնք ունեցած է: Վերաբերութեանը կը նպատակադէր քիմիկ թերութեան պատճառով հիւանդներուն խօսելու անկարողութիւնը սրբազրել:

Վերաբերութեանը կատարած է ղարմանատան տնօրէն փրոֆ. Սարգիս Անանեան, որ հայրենի «Երկիր» թերթին յայտնած է, թէ ղարմանատունը ստեղծուած է առողջնպահութեան ազգային հիմնարկի ջանքերուն շնորհիւ եւ ոչ թէ օտարներու օժանդակութեամբ:

Թէեւ ղարմանատունը ցարդ պետական հովանաւորութիւն եւ օժանդակութիւն ստացած չէ, սակայն անոր գործունէութեան ընթացքին հիւանդներուն շարաշահում չի կատարուիր:

Նշենք, որ ղարմանատունը ղարկան արձագանգ ունեցած է նաեւ Հայաստանէն դուրս: Հոն բուժուողներու շարքին են այս նպատակով այլ երկիրներէ եկած օտարահպատակներ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ ՆՇԵՅ ԻՐ 70ԱՄԵԱԿԸ

Հինգշաբթի, 9 Նոյեմբերին, յատուկ հանդիսութեամբ նշուեցաւ հայկական գիւղատնտեսական ակադեմիային 70ամեակը:

Այս առիթով շնորհաւորական ուղերձ յղած էր նախագահ Ռոպէրթ Քոչարեան, որ բարձր գնահատելով ակադեմիային աշխատանքները ընդժամ էր անոր կարեւոր դերը երկրի գիւղատնտեսութեան զարգացման մէջ:

Շնորհաւորական ուղերձներ յղած էին նաեւ Ազգային ժողովի նախագահ Արմէն Խաչատրեան եւ վարչապետ Անդրանիկ Մարգարեան:

Հանդիսութեան ներկայ էին Ամերիկայի դեսպան Մայքլ Էնթըն, Միացեալ Նահանգներու գիւղատնտեսութեան նախարարութեան եւ Ֆրեզնոյի համալսարանի ներկայացուցիչները, որոնք հաւաստիացուցին, թէ Միացեալ Նահանգները պատրաստ են շարունակելու օժանդակութիւնը երկրի գիւղատնտեսական ներկայ դժուարութիւնները յաղթահարելու համար:

Ռուսիոյ եւ Վրաստանի գիւղատնտեսական համալսարաններու տնօրէնները եւս նոյն պատրաստակամութիւնը յայտնեցին:

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ «ՀՕՄԸ ԵՒ ՍՕԽԸ ՄԻՆՉԵՒ ՕՐՍ»

9 Նոյեմբերին, տեղի ունեցաւ ղասախոսական հանդիպում մը, կազմակերպութեամբ ՍՕԽԻ Շրջանային վարչութեան ղասախոսական յանձնարարութիւնը: Օրակն ղասախոսն էր վարչութեան փոխ ատենապետ Արփի Աւընեան, իսկ նիւթը՝ «ՀՕՄԸ եւ ՍՕԽԸ մինչեւ օրս»: Դասախօսութիւն ներկայացուց ՀՕՄԻ պատմականը: Ան նշեց, թէ ՀՕՄԻ եւ ՍՕԽԻ հիմնական նպատակն է ծառայել Հայ ազգին, հայրենիքին եւ եկեղեցիին:

Ան մանրամասն ներկայացուց Հալէպի մէջ ՀՕՄԻ եւ ՍՕԽԻ տարած աշխատանքները, իր հիմնադրութենէն՝ 1919 թուականէն, մինչեւ այսօր: Ինչպէս նաեւ խօսեցաւ այն գործունէութեան մասին, որ կը տարուի Հայաստանի համար:


Դասախօսութեան ավարտին ցուցադրուեցաւ տեսաերիզ մը, որ կը ներկայացնէր ՀՕՄԻ իրագործումները Հայաստանի մէջ, ինչպէս նաեւ երկրաշարժի օրերուն անոր կատարած մեծ ներդրումներն ու տարած մարդասիրական աշխատանքը՝ հայրենի ժողովուրդին ցաւը ամոքելու համար:

ՀԱՍԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆ
ՀԱՍՅԵՆ
HAMPIG SASSOUNIAN C- 88440
CSP - L.A.C. D -5- 232 44750
60-TH ST. WEST LANCASTER,
CA, 93536
USA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայաստանի Առաջին Հանրապետութեան (1918 թուականի Մայիսի 28-1920 թուականի Դեկտեմբերի 2) ռազմաքաղաքական համակարգի եւ նրա առանձին կառույցները (բանակ, ոստիկանութիւն, յատուկ ծառայութիւններ) պատմական փորձի եւ փորձառութեան ուսումնասիրումն է կատարուած պատմագիտութեան թեկնածու Վանիկ Վիրաբեանի «Հայաստանի Առաջին Հանրապետութեան յատուկ ծառայութիւնները 1918-1920 թուականներին» խորագրով գրքովում, որն ընթացողի գրասեղանին է ղրուել վերջերս: Հեղինակը նշում է, որ 1918-1920 թուականներին կարճատեւ ժամանակամիջոցում եւ ռազմաքաղաքական ծանր իրավիճակում գրեթէ ոչնչից յաջողուեց ստեղծել պետական-քաղաքական ուժային կարեւորագոյն կառույցներ՝ բանակ, ոստիկանութիւն, յատուկ ծառայութիւններ (հետախուզութիւն եւ հակահետախուզութիւն) եւ այլ հանգոյցներ, առանց որոնց անհնարին է ցանկացած բնական պետութեան գոյատեւումը:

Ընդգծում է, որ 1918-1920 թուականներին ղժուարին տնտեսաֆինանսական եւ ռազմաքաղաքական իրավիճակում յատուկ ծառայութիւնները յամառ ջանքերով հաջողութեամբ կատարեցին իրենց պարտականութիւնները:



ԵՐԵՎԱՆ 1999

Վ. Գ. ԿՈՐՄԵՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԱՐԽՈՒՄԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918 - 1920 ՅՅ

բաւական հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում հայոց յատուկ ծառայութիւններին հետախուզական գործունէութեան մասին Անդրկովկասում, Թուրքիային յարող տարածքներում, այլ պետութիւններին տիրապետութեան ներքոյ գտնուող հայրենակ մարզերում: Վ. Վիրաբեանի սոյն գրքովը զգալի նորութիւն է բերում հայ պատմագրութեան սակաւ ուսումնասիրուած վերոնշեալ հարցերի լուսաբանման գործում:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Պատմագիտութեան թեկնածու
«Հայաստանի Հանրապետութիւն»

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԵՐԱՐՁԱՆՆԱԳՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Մինչեւ 1 Յունուար 1999 թուական արձանագրուած բոլոր իրաւաբանական անձերն ու կազմակերպութիւնները պարտաւոր են կրկին արձանագրուել իրենց կարգավիճակը ըլլայ Հայաստանի քաղաքացիական նոր օրէնսգիրքին համապատասխան: Վերաբանագրման վերջին պայմանաժամը 31 Դեկտեմբեր 2000 է, որմէ ետք իրաւաբանական անձերու եւ կազմակերպութիւններու մէջ մար պիտի լուծուի, իսկ միւս մասին հիմնադիր փաստաթուղթերը անվաւեր պիտի համարուին:

Հայաստանի պետական արձանագրութեան վարչութեան պետ Տիգրան Մուկուչեան վստահեցուց, թէ մինչեւ տարեվերջ պիտի արձանագրուին այն բոլոր բանտներու ընկերութիւնները, որոնց մէջ կայ պետական բաժնեմաս: Ան հաւաստեց, թէ արձանագրող մարմինին կողմէ յարուցուող որեւէ խոչընդոտ կամ դժուարութիւն չկայ եւ որեւէ վերաբանագրում հին օրուան ընթացքին պիտի աւարտուի: Վերաբանագրման ընթացքին իրաւաբանական անձերն ու կազմակերպութիւնները

ազատ կը կացուցուին պետական արձանագրութեան համար նախատեսուող տուրքերէն: Վարչութեան պետին համաձայն, ներկայիս կը վերաբանագրուին իրական գործունէութիւն ունեցողները: Գործընթացի ավարտին արձանագրուած պիտի ըլլան իսկապէս ձեռնարկատիրական գործունէութեամբ զբաղող կազմակերպութիւններն ու իրաւաբանական անձերը:

Հիւանդանոցային Ապահովագրութիւնը Անհրաժեշտութիւն է
ԱՅՏԻԼ
Գործակցաբար
MedNet
BANKERS ASSURANCE SAL
SASCO KARYOGLAN GROUP
ԱՅՏԻԼ - ԱՅՏԻՏ ԵՆԵ, Բ. ՅԱՐԿ ԸՆՈ. 01/262231 - 01/2425567

ARA TRAVEL IATA ԱՆԴԱՍ
ARMENIAN AIRLINES Տ
SALES AGENT,
ՌԻԱԽՈՒԹԵԱՄ ԿԸ ՅԱՅՏԵ
ԻՐ ՅԱՐԳՈՅ ՅԱՃԱԽՈՐԴՆԵՐՈՒՄ,
ՈՐ Կ'ԱՊԱՇՏՈՎԵ
ՊԵՅՐՈՒԹ - ԵՐԵՎԱՆ - ՊԵՅՐՈՒԹ
ԵՒ ՇԱԼԵՊ - ԵՐԵՎԱՆ - ՇԱԼԵՊ
ARMENIAN AIRLINES ընկերութեան
• օդանաւային տոմսեր • ապրանքի փոխադրութիւն
ԱՐԱ ԹՐԱՎԵԼ,
Պուրճ Համուտ, նամակատան շէք,
ԸՆ. 268594 - 261296 : FAX: 261296

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
Հ. Յ. Դ. ԼԵՄԻ պաշտօնաթերթ
ԹԻԼ 6 - 7 (Սեպտեմբեր - Շոկտեմբեր)
03-885123:

Միջապգային Քաղաքական

ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ ԱՐԱԳՈՒԹԻՒՆ՝ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

Վերջերս տեղի ունեցած արաբական գերաստիճանի աևարտայն վայրկեաններ ետք Քաղաքի «ԱՂ ձեզիրա» արբանեակային հեռուստեսիլի կայանը արդէն յայտարարութիւններ կ'ընէր գերաստիճանի արդիւնքներուն մասին:

Հեռուստեսիլի կայանը հարցազրոյցներ ունեցաւ իսլամ արմատականներու, ինչպէս նաեւ արաբական ընդդիմադրութեան ամէնէն զօրաւոր հոսանքներու ղեկավարներուն հետ, որոնք քննադատեցին գերաստիճանին արդիւնքները եւ համոզում յայտնեցին, թէ արաբական երկիրներու յեղափոխութիւնը եւ իսրայէլի հետ գինեակ ճակատումը միայն կրնայ բարեփոխել շրջանին ապագան:

Եգիպտոսի մայրաքաղաքի ծայրամասերը ապրող Նասէր Մոնտի կ'ըսէ, թէ ինք չի կրնար յազանալ «ԱՂ ձեզիրա» կայանին:

Չորս տարի առաջ հիմնուած կայանի համարձակ եւ կոշտ ըլ-

լալու աստիճան անկեղծ ակնարկութիւնները, արաբական կառավարութիւններու ակնարկութիւնները, արաբական կառավարութիւններու հասցէին ուղղուած կծու քննադատութիւնները եւ իսրայէլի մասին տուած ստոյգ տեղեկութիւնները, ըստ Մոնտիի, կ'արտացոլացնէ միլիոնաւոր արաբներու մտածողութիւնը, որ շատ քիչ անգամներ արձագանգ կը ստանար պանզուածային հաղորդակցութեան միջոցներով:

Տասնամեակներու ընթացքին շատ վայրագութիւններ տեղի ունեցած են իսրայէլի մէջ, եւ շատ կծու արտայայտութիւններ հրապարակուած են պետական գրաւոր կամ լսատեսողական հաղորդակցութեան միջոցներուն ընդմէջէն: Սակայն վերջին տարիներուն միայն «ԱՂ ձեզիրա»-ին նման անկախ, արաբերէնով սփռող կայանները շրջանին լուրերը տուին. պատերազմի տեսարաններէն առնուած կամ ճակատագրական դէպքերու գծազը-

ուած նկարներով եւ քարտէսներով եւ դժուար հարցադրումներ ըրին արաբական երկիրներու կառավարութիւններուն առնելիք քայլերուն մասին:

«ԱՂ ձեզիրա»-ին եւ արաբական միւս կայաններուն, ինչպէս նաեւ արաբական ինթերնէթի նոր էջերուն շնորհիւ էր, որ Երուսաղէմի մէջ տեղի ունեցած տեղական բողոքի ցոյց մը վերածուեցաւ շրջանային շարժումի եւ իր արձագանգը ունեցաւ արաբական գրեթէ բոլոր մայրաքաղաքներուն մէջ, ուր միլիոնաւոր արաբներ փողոց իջան իրենց զօրակցութիւնը յայտնելու համար պաղեստինցիներուն:

«ԱՂ մէկը օգնեց, որ ժողովուրդը աւելին գիտնայ եւ տեսնէ, թէ իսրայէլացիները ստախոս են», նշեց Մոնտի՝ աւելցնելով, որ այդ տեսակէտը չի պարզուիր «Սի. էն. էն.», «Պի. Պի. Սի.» եւ ուրիշ արեւմտեան կայաններու միջոցով:

«Իմ լեզուովս» կը խօսին, նշեց Մոնտի: «Անոնք տարբեր տեսակէտներ լսելի կը դարձնեն... եւ երբ կը լսես այդ տեսակէտները, կը զգաս, որ կան քեզի պէս մտածողներ»:

Կազախի եւ Այսրյորդանանի փողոցներուն մէջ չէր միայն, որ ճակատամարտեր կը մղուէին, այլեւ անոնք տարածուած էին նաեւ տեղեկատուական կեդրոններու գրասենեակներուն, ինչպէս նաեւ սեփական, գրեթէ պաշտօնական եւ պետական արբանեակային սփռումներու, ինթերնէթի եւ այլ ձեւի մամուլ ծառայութիւններու գրասենեակներուն մէջ:

Շրջանի մը մէջ, ուր լուրերու գրասենեակները կառավարութեանց կողմէ ընական երեւոյթ էր, ժամանակին, եւ տակաւին է իրաքի նման աւելի խիստ երկիրներու պարագային, Եգիպտոսի, Յորդանանի, Լիբանանի եւ Մոցի շրջանի միւս երկիրներուն քաղաքացիները կրնան հետեւիլ ոչ միայն իրենց կառավարական աղբիւրներուն, այլ նաեւ՝ ուրիշ երկիրներու կառավարութիւններու տեսակէտներուն:

Անոնք կրնան «ԱՂ ձեզիրա»-ի նման անկախ կայաններու սփռումները գիտել, ապա պաղեստինցիներու տեսակէտները լսել իրենց կայանէն:

Անոնք կրնան «Սի. էն. էն.» կամ «Պի. Պի. Սի.» դիտել, եթէ անգլերէն կը հասկնան: Դամասկոսի նման անցեալին արտաքին տեղեկութիւններէն կտրուած քաղաքներու մէջ մարդիկ կրնան իրենց տուններէն ներս կամ ինթերնէթի ծառայութիւն հայթայթող գրասենեակներու մէջ պաղեստինցիներուն կամ իսլամ արմատական խումբերուն նուիրուած ուսյլ սալթերը մտնել:

Հարաւային Լիբանանի մէջ հաստատուած շիի իսլամական Հըզպալլա կազմակերպութիւնը ինթերնէթը եւ արբանեակային սփռումները օգտագործած է հրոսակային գործողութիւններու սփռումին համար, որ կը ծառայէ բարոյական ապստակ մը տալու իսրայէլին:

Մինչ իսրայէլեան եւ կարգ մը արեւմտեան աղբիւրներ արաբական այդ կայանները կը համարեն միակողմանի. միւս կողմէ՝ արաբական տեղեկատուական միջոցները դիտել կու տան, թէ վերջապէս հաւասարութիւն գոյացած է շրջանային դէպքերու ներկայացման մէջ:

«Մենք միշտ այնպէս զգացած ենք, որ արաբներուն, եզ թվապահներուն, պաղեստինցիներուն ձայնը յստակ չէ Արեւմուտքին մօտ, եւ որ նախապաշարուած գոյութիւն ունի. մենք կ'ուզենք փոխել այդ մէկը», կ'ըսէ Նիհալ Սասա՝ Եգիպտոսի «Նիլի» վի. Ինթերնէթի շրջան: Հեռուստեսիլի կայանի քաղաքական աւազ խմբագիրը, կայանը, որ վիճարարաբար անգլերէնով կը պիտէ տեղեկատուութեան նախարարութեան սահմանած օրէնքներուն համաձայն, կը փորձէ եգիպտացիներու տեսակէտները հասցնել Միջին Արեւելքի եւ Եւրոպայի դիւտանգէտներուն եւ մտաւորականներուն:

«Միւս կողմի (իսրայէլեան) տեսակէտը միշտ կը բացատրուի եւ կ'ուսուումասիրուի», աւելցուց Սասա՝ շարունակելով, որ «պաղեստինցիները գրաւման տակ են: Ասիական դիմադրութիւն է եւ ոչ թէ սահմանային հակամարտութիւն» Հնդկաստանի եւ Փաքիստանի հարցին նման:

Տեղեկատուութեան աղբիւրը նպաստեցին պաղեստինցիներու օժանդակութիւններու հաւաքման եւ գոնէ ժամանակակերպութիւնը համադրեցին արաբական աշխարհի մասնատուած քաղաքականութիւնը:

Ծոցի երկիրները, որոնք շուրջ տասը տարի առաջ շատ մը պաղեստինցի աշխատակողներ իրաւագրկեցին, որովհետեւ անոնց ղեկավարները նեցուկ կանգնեցան նախագահ Սատաւմ Հիւսէյնի Բուհէյի ներխուժումին, ամէնէն համարձակը եղան քննադատելու իսրայէլեան վայրագութիւնները եւ առատաձեռնօրէն հարիւրաւոր միլիոն տոլար օգնութիւն յատկացուցին ինթերնետին:

Շար. էջ 8

ԻՍՐԱՅԷԼԸ ԳԻՏԵՑԷՔ ԻՔՐԵԻ ՀՐԷՍԿԱՆ ԱԶԳՊԵՏՈՒԹԻՒՆ ՄԸ ՔԻՉ ԹԷ ՇԱՏ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ

Երբ ես պատանի էի Պրուք-լինի մէջ 1940ական թուականներուն, այն հազուագիւտ հրեայ պատանիներէն կը համարուէի, որ քաղաքական գիտակցութիւն ունին, բայց սիոնական չեն: Ես կը պաշտպանէի այն տեսակէտը, թէ Ողջակիցութեան վերապրողները ազատ մուտքի իրաւունք պէտք էր ունենային դէպի Միացեալ Նահանգներ եւ դէպի այն տեսակի հրեական արարական Պաղեստին, որ ՄԱԿը կը փորձէր ստեղծել:

Սակայն այդպէս չեղաւ, եւ իսրայէլը իրողութիւն դառնալէն ի վեր ես համամիտ եղած եմ հրեայ եւ ոչ հրեայ ամերիկացիներուն այն հակա մեծամասնութեան, որ կ'ուզէ պաշտպանել անոր գոյութիւնը:

Վերջերս ամերիկացի բարեկամ մը, որ լաւատեղեկ է միջազգային հարցերէն, կը պնդէր, թէ միակ կայուն լուծումը ներկայի իսրայէլի, Այսրյորդանանի եւ կազախ սահմաններէն ներս մէկ ժողովրդավար պետութեան հիմնումն է, հաւասար քաղաքացիութիւն տալով բոլոր այժմ հոն ապրողներուն: Պետութիւնը կ'ունենայ երկու պաշտօնական լեզուներ: Իրողապէս անիկա կ'ըլլայ պետութիւնը երկու ազգերու: Ազգերէն ոչ մէկը միւսին վրայ «գերակայութիւն» կը վայելէ որեւէ շրջանի մէջ:

Ցատակ է, որ այս տարազը անկարելի է գործադրել այսօրուան չափազանց ատելութեամբ լեցուած միջուորտին մէջ: Աւելի ճիշդը, ընդհանրապէս հաւանական չէ անոր գործադրութիւնը նշուած ձեւով: Սակայն անիկա շրջագիծ մը կրնայ ներկայացնել քննարկելու համար իսրայէլի հիմնական հարցը՝ կարելի է թէ՛ հրեական եւ թէ՛ ժողովրդավար երկիր մը հիմնել: Մէկ պետութեան այս տարազը կ'առաջարկէ լուծում մը, որ նման է

Քէմփ Տէյվիտի մէջ գրեթէ գոյացուելիք համաձայնութեան: Այդ գաղափարը շատ ամերիկեան է: Միացեալ Նահանգները այն հազուագիւտ օրինակներէն են, ուր պետութիւնը ինք կը ստեղծէ ազգը եւ ոչ թէ հակառակը: Մեր հիմնարկները կառուցային են եւ ոչ մշակութային: Նոր ներգաղթողներ հասած են Ամերիկա, աշխատած են դանդաղօրէն զարգացող տնտեսական եւ քաղաքական կառոյցին մէջ եւ այդ միջոցին նոր իմաստ տուած են ազգային մշակոյթին:

Այսօրուան Ամերիկան իր սեփականաշնորհումներով եւ տնտեսութեան կառավարութեան կողմէ համակարգման օրէնքներով նոյն դաշնակցային կառոյցն է, ինչ որ էր 1789ին, բայց անոր 2000ի ազգային մշակոյթը արմատական փոփոխութեան ենթարկու էր 1950ի մշակոյթին, որ իր կարգին տարբեր էր 1900ի մշակոյթէն եւ այդպէս դէպի ետ:

Եւրոպական գրեթէ բոլոր պետութիւնները կը բացատրուին իրենց ազգերով: Ոչ հեռու անցեալին Պիսմարք ստեղծեց գերմանական առաջին պետութիւնը, որուն պատճառով գերմանացիները դժկամութեամբ կը հրաժարին քաղաքացիութեան իրենց «արեան իրաւունք»էն:

Ճրանատ շատ աւելի բաց է նորեկներու առջեւ, այնքան ատեն որ անոնք պատրաստ են իրենց «Տըկօրեան նախնիներուն» յաջողող սերունդները ըլլալու: Բրիտանիան երկուներէ մէջ է որոշելու համար, թէ մէկը ազգ է կամ երեք՝ չորս:

Իսրայէլ ազգ-պետութիւն մըն է՝ դիտմամբ եւրոպական նախատիպի վրայ հիմնուած՝ եւրոպացի սիոնականներուն կողմէ, որովհետեւ հրեայ ազգը գրեթէ երկու հազարամեակ ապրած էր միայն Սփիւռքի մէջ:

19րդ դարու ոչ շատ ժողովրդավար ազգ-պետութիւնները

իրենց փոքրամասնութիւններուն հարցը կը լուծէին ճշշելով պահոնք: Վերսայի վեհաժողովի Ուիլսոնեան իտէպապաշտութիւնը փորձեց ճշուում փոքրամասնութիւնները: Համաշխարհային Բ. պատերազմէն ետք էր միայն, որ Եւրոպայի մէջ ժողովրդավարութիւնը ազգայնակառուցութեան չափ լուրջ ընդդէմ ստացաւ: Երկար ժամանակներ արեւմուտք գտնուող երկիրներուն մէջ բաւական յաջող էր ընթացքը. արեւելեան շրջանին մէջ, սակայն, տակաւին կը փորձարկուէին:

Ստեղծման սկզբնական շրջանին իսրայէլ խորապէս նուիրուած էր ժողովրդավարութեան: Արար քաղաքացիներուն հետ կը վարուէին առնուազան այնպէս, ինչպէս բրիտանացիները կը վարուէին համարեւմտեան հնդկներուն հետ, եւ աւելի լաւ, քան՝ գերմանացիները թուրքերուն հետ: Ուստի ժողովրդավար չհրեական երկուսայրարանութիւնը լուծուած էր:

1987ի Այսրյորդանանի գրաւումը շրջեց կացութիւնը: Եթէ իսրայէլի հակակշռած ամբողջ տարածքը ժողովրդավար պիտի ըլլար, ապա հրեական պիտի ըլլար: Եթէ՛ գրաւուած շրջաններուն մէջ ապրող արաբներուն քաղաքացիութիւն պիտի չարուէր, ապա ժողովրդավարութիւնը պիտի վերանայ, գոնէ՝ արդիական ձեւի ժողովրդավարութիւնը:

Տարածքային ներկայի դրութեան մէջ բնակչութեան այժմու բաժանումով հարցը անլուծելի է: Երկազգային առաջարկը իսրայէլը պիտի դնէ ժողովրդավարութեան սիրոյն իր հրեական ինքնութեանէն զիջելու պարտադրանքին տակ՝ վերածուելու համար Զուլեյե-

րիոյ մը, սակայն՝ առանց դարձու խաղաղութեան ընձեռած յարմարութիւններուն: Դժուար է տեսնել իսրայէլի մը, որ կրնայ համաձայն գտնուել ասոր:

Սակայն համադրուած տարբերակ մը կրնայ մտնել այն առաւարկին, որուն համաձայն գտնուեցաւ վարչապետ Էհուտ Պարաթ Քէմփ Տէյվիտի մէջ: Իսրայէլը ժողովրդավար հրեական ազգ-պետութիւն մը պահել՝ բաւարար չափով պաղեստինցիները իրենց սեփական երկիր մէջ պահելով, որպէսզի արար քաղաքացիները փոքրամասնութիւն մնան երկար ժամանակուան համար:

Այսպիսի լուծում մը անշուշտ ոչինչ կը նշանակէ Երուսաղէմի պատմական քանի մը քառ. մեթրերու հարցի լուծման ընթացքին մէջ: Անիկա նաեւ չի կրնար լուծել իսրայէլէն դուրս դրուած պաղեստինցիներուն միւս հարցերը կամ իսրայէլի արար քաղաքացիներուն հարցերը: Կրնայ ըլլալ, որ հրեայ իսրայէլցիներուն մեծամասնութիւնը կը նախընտրէ հրեական, բայց ոչ անպայմանօրէն ժողովրդավար պետութիւն մը: Արդիւնքը, սակայն, կրնայ սպասելի պատերազմ մը ըլլալ, որուն ընթացքին իսրայէլ սկզբնական շրջանին կրնայ յաղթել իր թշնամիներուն, բայց թերեւս ոչ՝ 30 կամ 100 տարիներու վրայ:

Իսրայէլացիներուն համար, ինչպէս է պարագան եւրոպացիներուն, ժողովրդավար ազգ-պետութիւն ունենալու գաղափարը բաւական բնական է: Եթէ ամբողջ աշխարհը այդքան ժողովրդավար ըլլայ, ապա մենք զմեզ պիտի գտնենք շատ աւելի խաղաղ եւ կայուն աշխարհի մը մէջ, քան կրնանք այժմ երեւակայել:

ՈՒՊՈՐԹ ԷՅ. ԼԷԻՒՆ «Ինթերնէթը ԼՆԵԼԼ ՀԵՐԸՏ ԹՐԻՊՈՒՄ»

ԻՐԱՆՑԻՆԵՐԸ ՓԱՆՈՒՍ ԿՈՒ ՏԱՆ ԶՔԱՒՈՐՈՒԹԵՆԷՆ

Անցեալ շաբաթ հարաւային Իրանի մէջ չորս ընտանիքներէ բաղկացած աւելի քան 20 հոգի հաշուող օդահաններ տեղական օդանաւ մը առեւանգած էին՝ իրրեւ յուսահատ փորձ մը երկրին փախուստ տալու:

Փորձը ձախողութեան մատնուեցաւ, երբ իրանեան Պանտար Ապպաս քաղաքին մէջ «Արիստոթել» նաւը-40 օդանաւը էջք կատարեց եւ օդայուն օդանաւէն վար ցատկեց:

Այժմ ձերբակալուած օդահանները մտադիր էին ուղղուելի դէպի Իսրայէլ, ապա՝ Միացեալ Նահանգներ:

Անոնց ինքնութիւնն ու արարքին զրոյսատուութիւնը տակաւին չեն բացայտուած, սակայն, ըստ երեւոյթին, անոնց այդ քայլը օրինակ մըն է, թէ իրանցիները (քանի մը հազար ամէն ամիս) ինչ ծայրայեղ քայլերու պատրաստ են դիմելու դուրս գալու համար իրենց երկրէն, ընդհանրապէս տնտեսական պատճառներով: Կեանքի պայմանները հետզհետէ անկում կրած են յեղափոխութեանէն ի վեր, եւ պաշտօնական հարաբերութիւններու արդիւնքները ցոյց կու տան, որ իրանցիներուն գրեթէ մէկ հինգերորդը քաւորու-

թեան մակարդակէն վար կ'ապրի: Արեւմտեան պետութիւնները մտահոգ են իրանցի ապօրինի գաղթականներու հետզհետէ աճող թիւով, սակայն անոնք չունին հասարակաց օրէնք ապաստան հայթայթելու կամ վերադարձ պարտադրելու գծով:

Անցեալ տարի իրանցի շուրջ 4000 ապօրինի գաղթականներ ապաստանեցան Բրիտանիա եւ այսպէսով հանդիսացան երկրին մէջ չինացիներէն եւ սիր լանքացիներէն ետք երրորդ մեծ գաղթականներու խումբը: Բրիտանիա, դիտել կու տայ պաշտօնատար մը, որը եզրած է իրանցիներուն վերադարձ չպարտադրելու քաղաքականութիւնը: Գաղթականներու թիւը այս տարի աւելի մեծ է:

Իրան ընդհանրապէս մասնաւոր արգելքներ չի դնէր երկիրը ձգելու ուղղությամբ իրանցիներուն առջեւ: Հարցը Եւրոպայ հասնելն է:

Թեհրանի մէջ իրենք զիրենք «ճամբորդական գրասենեակի աշխատակիցներ» ներկայացնելով՝ ճամբորդութեան դասաւորումներ կատարողները երկու լուծում կ'առաջարկեն՝ վիզա գնել կամ ցամաքային

վտանգաւոր «ընթացքով» մը ձեռնարկել, որ կը սկսի Պոսեյանի կամ Թուրքիայէն:

Վերոնշեալ գործակալներէն մէկը 2000 տոլարի եւրոպական երկիրներ մուտքը արտօնող «Շեմկեմ» վիզա կրնայ դասաւորել Թեհրանի մէջ յուսկան ղեկավարներուն: Յայտնի չէ, թէ այդ վիզաները իսկական են, թէ կեղծ: Անցեալ ամիս Թեհրանի մէջ դատուեցաւ կին մը, որ «Շեմկեմ» վիզաներ կը կեղծէր, մինչ Ֆրանսական ղեկավարներուն վերջերս զարմաբով յայտնաբերեց, որ իր անձնակազմէն մէկը իսկական վիզան կը ծախէր զրամով:

Քենզըրի մէջ հաստատուած իրանցի մը, քրիստոնեայ փոքրամասնութեան է, կը նկարագրէ, թէ ինչպէս կազմակերպուած «ընթացքով» մը մասնակցելով գացած է Սարաեւօ, անտառներու մէջէն ճամբորդելէ ետք կտրած է Սաւա գետը եւ անցած՝ Խուրաթիա, ապա՝ Սլովենիա, որմէ ետք Իտալիոյ մէջ հանդիպած է եկեղեցական գործիչներու: Ան ապա անցած է Աւստրիա, ուր արձանագրուած է իրրեւ գաղթական եւ, վերջապէս, հաստատուած է Միացեալ Նահանգներու մէջ:

Եթէ ան կարենար քիչ մը եւս սպասել իրանի մէջ, շատ աւելի ապահով ճամբորդութիւն մը պիտի ունենար:

Վերջին գրեթէ մէկ տարուան ընթացքին Թեհրանի աւստրիական հիւպատոսարանը ելքի ճամբայ դարձած է իրանի հրեական, հայկական, ասորի եւ նոյնիսկ գաղափարական համայնքներու առաջնորդներուն համար:

Աւստրիական վիզաներ կը շնորհուին այդ փոքրամասնութիւններուն, որոնց վիզանայի վրայով դէպի Միացեալ Նահանգներ արտագաղթը կը հովանաւորուի կրօնական խումբերու կողմէ:

Իրանի հրեայ եւ քրիստոնեայ դեպավարները նկատուի կու տան, թէ այդ խումբերէն ոմանց նպատակը իրանը իր փոքրամասնութիւններէն պարպելն է: Աւելի քան հազար հրեայ երկիրը կը ձգէ ամէն տարի՝ ետին ձգելով հետըզհետէ փոքրացող համայնք մը (ներկայիս շուրջ 20 հազար):

«Իրանը ձգելու ոչ մէկ կրօնական զրոյսատուական կայ», կ'ըսէ իրանի խորհրդարանին մէջ հրեայ համայնքի պատգամաւոր Մորիս Մոթամէտ:

Անոր կարծիքը կը բաժնէ իր հայ պաշտօնակից Լեւոն Դաւիթեանը, որ կ'ըսէ, թէ դէպի Միացեալ Նահանգներ հայ գաղթականներու հետզհետէ մեծացող հոսանքը մտահոգիչ է:

Ջարմանայի է այն, որ իրանէն արտագաղթը աւելի ընթացք ստացաւ կրօնական հանդուրժողութեամբ յատկանշուող ժամանակաշրջանի մը բարեկարգիչ նախագահ Մոհամէտ Խաթամեի օրով:

Ապօրինի ձեւով արտագաղթողներուն վրայ կ'աւելնան

Նորաստի Նորաստի

ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄ ՄԸ

ԵՐԱՇՅԱԿԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԻ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒՅՈՒՄԻ ՄԻՋԵՒ ԾԵՅՏՈՒԱԾ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՆ. ԱՐԴԵՕԶ ԿԱՐԵԼԻ՞ Է ԸԱՍԵՐԳՆԵՐՈՒ ԹԱՏԵՐԱԿԱՆԱՑՆԵԼ

Երաժշտական կատարումներու առիթով համերգասրահի մը մէջ նստած ունկնդիրներուն շարքին երաժշտադէտները ընդհանրապէս փոքրամասնութիւն են: Ունկնդիրներուն մեծամասնութիւնը յաճախ երկիրը ծնունդով կը հիանայ երաժշտիչներուն կարողութեան վրայ, որոնք տարիներու տքնաջան աշխատանքի մը արդիւնքը ցոյց կու տան: Հանդիսատեսը կը զգայ, թէ ինչ որ կը լսէ, կը գերզանցէ երգելու կամ նուագելու իր սեփական կարողութիւնները: Սակայն այս զգացումը ինքնին հակասական դրսեւորումներ կրնայ ունենայ: մէկ կողմէ անիկա կրնայ խոր յարգանք ստեղծել երաժշտիչներու գերադաս կարողութեան նկատմամբ, միւս կողմէ, անիկա կրնայ առիթ տալ քննական մտեցումի, նոյնիսկ՝ առաջնորդել դժգոհութեան բացայայտ արտայայտութեան, երբ կատարում մը հաճոյք չի պատճառեր:

Ի տարբերութիւն ունկնդիր հանդիսատեսին, թատրոնի հանդիսատեսը տարբեր ակնկալութիւններով կ'երթայ սրահ: Ընդհանրապէս ան չի վերլուծուի գերասանի մը կարողութեան ընդհանրութիւնը, որովհետեւ դերասանը «պարզապէս կը խօսի» բան մը, որ հանդիսատեսը ինք ալ կրնայ ընել: Երկար մենախօսութիւն մը զոչ ստրկիւն չի գար մացներ հանդիսատեսը: Ասիկա չի նշանակեր, թէ թատերասեր հանդիսատեսը նուազ պահանջկոտ է, քան՝ երաժշտասէր ունկնդիրը: Սակայն հանդիսատեսն ու դերասանը հաւանաբար աւելի հաւասար մակարդակի վրայ կը գտնուին թատերասրահին մէջ, որքան ալ բարդ ըլլայ ներկայացումը թատերախաղին նիւթը կամ ճոխ ըլլայ անոր մատուցումը:

Արդեօք երաժշտական կատարումը որեւէ բան ունի՞ ստրկիւնք բեմ - հանդիսատես այս կապէն, հարց կու տայ Բրիտանիոյ Ռոյալ Նէշնըլ Թիէթրի անօրէնքը:

Ժամանակակից կարգ մը խմբավարներ, ինչպէս՝ ձոն Իլլիթ Կարտինըր եւ Սայմըն Ռեթլըյ, կերպարանափոխած են համերգասրահ յաճախող երաժշտասէրներուն փորձառութիւնը:

Երաժշտութեան բեմական կատարումը ինքնին ներդրում թատերականութիւն մը կ'արտացոլացնէ, որովհետեւ կը պարունակէ կիրքի, երգի-ծանրի, յուզականութեան, մտերմութեան, փառահեղութեան, խոցելիութեան եւ անակնկալ սխալի մը հաւանականութեան զգացումներ: Այս բոլորը կը թափանցեն ունկնդիրին երեւակայութեան մէջ, մինչ ան ինքզինք հանդիսատեսներու հաւաքականութեան մէկ մասը կը

զգայ: Երաժշտական կատարումի պարագային տակաւին կը տիրապետեն աւանդական սովորութիւններ, ինչպէս՝ հազուադէպ խիստ օրէնքներ եւ ղեկավարի կամ մենեջրողներու նկատմամբ նոյնիսկ չափազանցուած յարգանք: Այս բոլորը կը շեշտեն տարբերութիւնը երաժշտիչներուն եւ ունկնդիրներուն միջեւ, դասակարգչին բաժանում մը ստեղծելով բեմի եւ սրահի միջեւ: Երաժշտական դասական գործի մը շարժումներուն միջեւ կամ հրաշալի կատարումէ մը ետք հանդիսատեսներուն ծափելու հակամէտութիւնը թէեւ յաճախ գնահատանքի սրտաբուխ արտայայտութիւն մըն է, սակայն խորթ կը թուի, որովհետեւ կը խանգարէ երաժշտական կատարումի մը ամբողջականութիւնը: Աւելին՝ համերգասրահի մը մէջ շատ աւելի յաճախ կարելի է հանդիպել երաժշտական մասնագիտական հրատարակութիւններու կամ դաղարի ընթացքին երաժշտական բառապաշարի գործածութեան: Երեւոյթ մը, որ հազուադէպ է թատերական ելոյթներու պարագային:

Բրիտանիոյ մէջ ներկայիս նոր ունկնդիրներ ներգրաւելու մեծ աշխատանք կը տարուի: Ծատեր, որոնք «լուրջ» երաժշտութիւն չեն սիրեր, այժմ կը զգան, թէ պատուարները կը խորտակուին դասական երաժշտութեան յատուկ համերգասրահներու մէջ, ուր պաշտօնականութիւնը սկսած է վերահանել եւ մենեջրողները երբեմն երգչախումբէն բաժնուելով կ'երգեն սրահին մէջ, երգին մասնակից դարձնելով հանդիսատեսները: 1994ին յատկանշական իրադարձութիւն մը տեղի ունեցաւ Լոնտոնի մէջ՝ երբ նոր օֆերա մը կատարուեցաւ Փիթըրպորտի մայր տաճարին մէջ: Ունկնդիրները կատարողներուն ընկերակցութեամբ, օֆերային պատմութեան զարգացումին հետ տեղափոխուեցան եկեղեցիին տարբեր մասերը, ապա՝ դէպի գիւղաւանին տարբեր շրջանները: Երաժշտական բարձր մակարդակի փորձառութիւն մը եղած է ասիկա, որովհետեւ երաժշտասէրները ոչ միայն չսկսեցին փոքր օֆերան, այլ նաեւ՝ ուղղակի մասնակցելու անոր կատարումին: Նման փորձառութիւն մը նոյնիսկ կրնայ նոր էջ մը բանալ հանդիսատեսի մը կեանքին մէջ:

Բրիտանացի բեմադրիչի մը համաձայն, երաժշտական կատարումներու մէջ թատրոնի յատուկ արկածախնդրական եւ ազատական ուղիին օգտագործումը անսպասելի արդիւնքներ կրնայ տալ՝ հետաքրքիր հանդիսատեսներու փառանքներ ներգրաւելով:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԻ ՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ՎՀՈՒԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳԻՐԲ ՄԸ ԿՐՆԱՅ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԲՆՈՅԹ ՉՈՒՆԵՆԱԼ, ՍԱԿԱՅՆ ԱՆԻԿԱ ԿԸ ՆԵՐԳՐԱԿԻ ՄԻԼՈՆԱԻՈՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐ

Փոքրիկ կախարհի մը՝ Հերի Փոթըրի մանկապատանեկան շարունակական պատմութեան չորրորդ հատորը խելայից հետաքրքրութիւն ստեղծած է հրատարակչատուններու եւ խաղաղայրերու մէջ: Անցեալ Հոկտեմբերին Ճ. Ք. Ռոուլինկի 768 էջերէ բաղկացած անգլերէն գիրքին գերմաներէն թարգմանութեանէն աւելի քան կէս միլիոն օրինակ վաճառուեցաւ գիրքին հրատարակումին առաջին օրը: Կէս գիշերէն մինչեւ առաւօտ հազարաւոր մանուկներ եւ ծնողներ հերթի սպասեցին գրախանութիւններու առջեւ՝ անհախնդիր էր արձանագրելով հրատարակչական ճարտարարուեստին ժամանակակից պատմութեան մէջ:

Վերջերս Քանադայի մէջ կայացած Գրագէտներու Միջազգային փառատօնին առիթով վէպին հեղինակը իր չորրորդ հատորին ընթերցումը կատարած է Թորոնթոյի Սթայտոմ մարզասրահին մէջ: Աւելի քան 12 հազար մանուկներ եւ ծնողներ, վէպին տիպարներուն պէս հազած, ներկայ եղան «Հերի Փոթըր Էնտ տը կոպլէթ աֆ Ֆայր» գիրքին մատուցումը: Թէեւ զրազիտուհիին ձայնը կ'արձագանգէր սրահին մէջ, եւ ներկաները նոյն յատուկութեամբ չէին լսեր արտասանուած իւրաքանչիւր բառը, սակայն մարզասրահներուն անոնք խանդավառ ծափերով եւ բացազանուութիւններով հրաժեշտ տուած են հեղինակին:

«Կը թուի, թէ յեղափոխութիւն մը առաջնորդելու եկած են», ըսած է լուսարձակներէ խուսափող զրագիտուհին՝ ի տես բազմազարդ ներկաներուն խանդավառութեան: Ան հաւանաբար մրցանիչներու «Կինէս» գիրքին մէջ պիտի լինուի իբրեւ ամէնէն աւելի մեծ թիւով ունկնդիրներ ներգրաւած գրադիտուհին, որուն ընթերցումը լսելու համար հազարաւոր մարդիկ սոմս գնած են:

Ռոուլինկ կը պատրաստուի յառաջիկայ ամառ հրատարակել Հերի Փոթըրի հինգերորդ հատորը, որուն վերագիրն է՝ «Հերի Փոթըր Էնտ տը օրթըր աֆ տը ֆինիքս»: Մինչ այդ «Հերի Փոթըր Էնտ տը սոքրալըր Գ սթոն» վէպը ժպտակէն պիտի վերածուի Հոլիվուդի մէջ եւ պիտի հրատարակուի 2001ի աշնան: Աւելի քան 40

հազար հոգի դիմում ներկայացուցած է դեր ստանձնելու համար ժպտակէնի մէջ, որուն պատրաստութիւնը պիտի արժէ 126 միլիոն տոլար: 11 տարեկան անգլիացի մանուկ մը՝ Տեներիլ Ռատքլիֆ, որ նոյնիսկ Փոթըրի խելայից սիրահար մը չէ եւ իր դասընկերներէն շատ աւելի նուազ կարողացած է Փոթըրի պատմութիւնները, պիտի կատարէ կախարհ մանուկին դերը:

Ան նախապէս Չարլզ Տիքընզի հերոսներէն՝ Տէվիտ Քափըր-Փիլիտի դերը կատարած է Պի.Պի.Սի-ի պատրաստած մէկ ժպտակէնի մէջ:

Ակնոցաւոր Հերի գիշերօթիկ վարժարանէ մը խոյս տուած եւ Սոլայքսֆիլդի մէջ կախարակութիւններով զբաղող տիպար մըն է: Անոր արկածախնդրութիւններուն առաջին հատորը լոյս տեսած է 1995ին, այնուհետեւ վէպը առասպելի վերածուած է հրատարակչական մարզին մէջ: Յարզ Հերի Փոթըրի չորս վէպերը թարգմանուած են 31 լեզուներու եւ 57 միլիոն օրինակ վաճառուած է 200 երկիրներու մէջ: Ամէն անգամ, երբ լոյս կը տեսնէ Փոթըրի նորագոյն պատմութիւնը, առաջին հատորներուն վաճառքը կ'աճուի կ'արձանագրէ, որովհետեւ հետաքրքիր ընթերցողներու նոր փառանքներ կը յայտնուին:

Ռոուլինկ 34 տարեկան առանձին մայր մըն է: Ան թշուառութեան մատնուած էր, երբ սկսած էր գրել Փոթըրի առաջին գիրքը: Սկզբնական այս կիրքը իր փոքրիկ աղջիկը դարձրոց տանելէ ետք, Փոթըրի առաջին վէպը գրելու համար ամէն օր է տիպարային մէկ սրճարանը կ'երթար, որովհետեւ տան շեռուցիչը գործածելու դրամ չուներ:

Ռոուլինկ կախարհ մանուկի մը տիպարը յղացած է 10 տարի առաջ, չորեքշաբթի ճամբորդութեան մը ընթացքին: «Հերիի տիպարը ամբողջական եւ կատարեալ ձեւով ծնունդ առաւ: Այնպէս զգացի, որ ան քովս եկաւ եւ ինքզինք ծանօթացուց», կը յիշէ ան: Ռոուլինկ տարիներ առաջ արդէն գրած է Փոթըրի 7րդ եւ վերջին հատորը: Ան գրական բազմաթիւ մրցանակներու արժանացած է մանուկներուն մէջ ընթերցանութեան սէրը արթնցնելուն համար:



Ջ.Ք. Ռոուլինկ

ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐ ՉՈՒՐԻ ՎՐԱՅ

Կարելի է փայտի կամ քարի վրայ իրագործուած գեղանկարներու հանդիպել: Թուրքիոյ (տիմիթի) արհեստագիտութեամբ ստեղծագործող արուեստագէտներ համակարգիչի պատասխան կ'օգտագործեն լէյզըր ճառագայթով պատկերներ ուրուագծելով օդին մէջ:

Սակայն՝ գեղանկար ջուրի՝ վրայ: Հնդկաստանի կեդրոնական ինտոր քաղաքին մէջ արտասովոր արուեստագէտ մը պարզապէս այս ձևով ուղղորդութիւն կը գրաւէ:

«Արուեստագէտներ կը գծեն տարբեր նիւթերու վրայ, ինչպէս՝ փայտ կամ թուղթ: Զիտ կը հետաքրքրէ ջուրը», կ'ըսէ ան:

Արդիւնտ Աքարիա հպարտ է իր իրագործած աւելի քան 80 գեղանկարներով, որոնք կ'ընդգրկեն նուրբ դիմանկարներէ մինչեւ ընդարձակ տեսարաններ: Ան ջուրի վրայ գծած է Հնդկաստանի ընդդիմադիր կուսակցութեան ղեկավար Սոնիա կանտիի եւ նուպէլեան մրցանակակիր Մայր Թերեզայի դիմանկարները, ինչպէս նաեւ՝ կրօնական նիւթերով գեղանկարներ՝ նուիրուած հիտուներու Շիվա աստուծոյ:

Աքարիա գեղանկարներ կը ստեղծէ փոշի ներկ ցանելով տափակ ամաններու մէջ լեցուած ջուրի վրայ: Իւրաքանչիւր գեղանկարի համար ան կը տրամադրէ երկու ժամ: Անոնք կը դիմանան փոքր ցնցումներու եւ կրնան գոյատեւել շուրջ 8 օր, եթէ ամանները անհպելի մնան:

Զուրը իբրեւ գեղանկարի հում նիւթ գործածելով՝ Աքարիա բազմաթիւ մարտահրաւէրներու դիմաց կը գտնէ ինքզինք: Օրինակ, գոյները նոյն տեղը չեն մնար ջուրին մակերեսին վրայ: Ան այս դժուարութիւնը յաղթահարած է փոշի ներկը խառնելով քիմիական 5 տեսակ նիւթերու, ջուրի մէջ լուծուող եւ կայուն ներկեր պատաստելու համար:

Այս արուեստագէտը արդէն իր տեղը ունի հնդկական մրցանիչներու «Լիմբա» գիրքին մէջ: Ան շուրջ 10 տարի փորձեր կատարած է, մինչեւ որ ի վերջոյ 1993ին յաջողած է գեղանկար մը գծել ջուրի վրայ: «Կ'ուզէի տարբեր բան մը ընել: Կը հիանայի անոնց վրայ, որոնք արտասովոր բաներ կ'ընեն. օրինակ, Հիմալայան լեռները կը մագլցին կամ ծոփերը կը կտրեն», կը բացատրէ արուեստագէտը:

Ան կը փափաքի իր արհեստագիտութիւնը սորվեցնել աշակերտներու, ինչպէս նաեւ՝ գեղանկարչութեան դպրոց մը հաստատել եւ ցուցասրահներ կազմակերպել Հնդկաստանի տարածքին:

ՔԱՆԻ ՄԸ ՊԱՐԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՆՄԱՂԱՆԱԼՈՒ ԿԱՄԱՐ

Սնամէջ փառասիրութիւնը սահմաններ չի ճանչնար: Այս անգամ ինչ թէ զբաղէր զառնուած ձգտումը կը մղէ դրամ ծախսելու եւ հուշակապահովելու, այլ ընթերցանութեան սիրահարներ աճուրդի մը կ'ը մասնակցեցին, ապագայի ժողովրդականութիւն վայելող վէպերու տիպարները դառնալու համար:

Բրիտանական արդի գրականութեան առաջնակարգ դէմքերէն ոմանք իրենց տակաւին չզրամ վէպերուն տիպարները աճուրդի դրամ են կը խոստանան բարձրագոյն գինը վճարողին անուսով կամ անոր պատկերով իր-

պար մը ստեղծել: Գնորդ մը որքան աւելի վճարէ իր անունին համար, գրադէտներ կը խոստանան այնքան աւելի երկար գրել անոր մասին:

«Ան մ հո լ թ ե ա ն աճուրդը», ինչպէս կը կոչուի այս արտաուոց սնամէջ ջուրի մը, ստեղծողն ու պատկերիչը ժողովրդականութիւն վայելող վէպերու տիպարները դառնալու համար: Աճուրդին հասոյթը ամբողջութեամբ պիտի յատուկուի գրականութեան հիմնարկի մը, որ կը գրանցի արդիւնքները տանջանքի ենթարկուած բանտարկեալներու դար-

պիտի գրեն, սակայն կը յուսան, որ գնորդը ինք հայթայթէ հաւանական վէպի մը նիւթը:

Իր տեսակին մէջ իւրաքանչիւր այս աճուրդին ընթացքին կը նախատեսուի իւրաքանչիւր գիրքի համար գոյացնել շուրջ 5000 փառանք: Այսուհանդերձ փառանք հուշակի տիրանալու սահմանները երկինք ու երկիր չեն ճանչնար...: Կարելի է նաեւ հասնալ նոյնիսկ 150 փառանքի:

Սակայն «Անմահութեան աճուրդ» ին մասնակցութեան շարունակականութեան համար, որ հետաքրքրական մարտահրաւէր մը կը նկատէ վէպի մը տիպարները աճուրդի դիմելու ինչպէս որ կ'ընեն: Անոնք

ԵՐԿՈՒ ՄՐՑԱՆԻՇՆԵՐ

Տպաւորապաշտ եւ արդի արուեստի գործերու շուկային մէջ երկու մրցանիչներ արձանագրուեցան 8 եւ 9 Նոյեմբերին, երբ Փիթաքսի «Ցամաք» պար ջրուստագէ՞ գեղանկարը 55 միլիոն տոլարի վաճառուեցաւ աճուրդի Քրիսթի՞ գ վաճառատան Նիւ Եորքի կեդրոնին մէջ, իսկ Մաթիսի «Լա Ռոպ Փերսան» գեղանկարը 17 միլիոն 55,750 տոլարի վաճառուեցաւ Սոթբի՞ գի Լոնտոնի վաճառատան մէջ:

Կը նախատեսուէր, որ Փիթաքսի կապոյտ ժամանակաշրջանին պատկանող

եւ ծալուած թեւերով կնոջ մը դիմանկարը վաճառուէր 25 միլիոնէն 30 միլիոն տոլարի: Փիթաքսի վերջին մրցանիչը արձանագրուած էր 1989ին, երբ Փարիզի մէջ անոր «Լէնոս տէ փիեռէթ» գեղանկարը վաճառուած էր 51 միլիոն 671,920 տոլարի:

Ինչ կը վերաբերի Մաթիսի գունազեղ գեղանկարին, որ կը պատկերէ պտուղներով եւ ծաղկաճամով սեղանի մը եզրին նստած կին մը, անիկա շուկայի մէջ ձգեց տպաւորապաշտ գեղանկարիչին նախկին մրցանիչը: 1995ին Մաթիսի «Լա փոզ հին-

ՄԵԹՐՈՅԻ ԿԱՅԱՐԱՆՆԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ ԹԱՏԵՐԱԲԵՄ



Օֆերայի Ֆրանսացի երգչուհի Մարի-Ռէն Ուալէ իր ասպարէզին սկիզբը յուսախաբուութիւն մը պարած է եւ սկսած է երկր Փարիզի մեթրոյի կայարաններուն եւ վակոններուն մէջ, իր պարուստը ապահովելու համար, առանց երբեք երեւակայելու, որ ստորերկրային երկաթուղիները բարձունքի մը պիտի առաջնորդէին զինք: Շուրջ 40 տարեկան սոփրանօ երգչուհին հրաժարած էր երգարուեստի իր ասպարէզէն, որովհետեւ չէր յաջողած տպաւորել օֆերայի ղեկավարները: Այլ ասպարէզ մը կերտելու վճառակամութեամբ, ան Ֆրանսական գրականութեան մէջ դիկտորային վկայական ստացած էր Սորպոնի համալսարանէն, սակայն վերջերս յաճախ վերադարձելու փութելու էր Փուլէի իրախները կ'երգէր Փարիզի մեթրոյին մէջ, որովհետեւ կը սիրէր երգարուեստը, նաեւ որովհետեւ կ'ուզէր յաւելեալ դրամ չափել:

Շարլ Էջ 8

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՊԱՍՔԵԹՊՈԼԷՆ. ՊԵ. ԷՅ.

ՍԻՔՍԸՐԶ ԿՐԵՅ

ԻՐ ԱՌԱՋԻՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Էն. Պի. Էյի մրցումներուն յաջորդական տասը յաղթանակ արձանագրելէ ետք, Ֆիլատելֆիա Սիքսթրոյ կրեց եղանակի իր առաջին պարտութիւնը, երբ 88-73 արդիւնքով պարտուած հեռացաւ Շարլոթ Հորնեթի դաշտէն: Յաղթական կազմին մարզիկներէն Էլտըն Քէմպլը նշանակեց 22 կէտ եւ 11 ռիպաունտ, իսկ անոր խմբակից Պէյրըն Տէյլփա՝ 12 կէտ, 11 էսիսթ եւ 10 ռիպաունտ:

Եւրոպ ձեզ 116-78 արդիւնքով պարտութեան մատնեց Տենիլըր Նակէթըրը, հակառակ Քարլ Մալոնի բացակայութեան: Ան մէկ մրցումի համար կախկալուած էր եւ 7500 տոլար տուգանքի ենթարկուած, շաբաթակիցքին Տալաս Մալքըրիքսի մարզիկ Քրիսթիան Լաէթըրին դիտումնաւոր կերպով հարուածած ըլլալու համար:

Չախողութիւններու իր շարքը շարունակեց Շիքսո Պուլլ եւ կրեց եղանակի իր 11րդ պարտութիւնը՝ 100-71 արդիւնքով պարտուած հեռանալէ ետք Սաքրամենթո Քինկլի դաշտէն: Յաղթական կազմին մարզիկ Քրիս Ուեյթըրը նշանակեց 29 կէտ, 13 ռիպաունտ եւ 5 էսիսթ:

Ման Անթոնիօ Սփրըյ 112-85 արդիւնքով պարտութեան մատնեց Սիէթլ Սուփըրսոնիքսը, արձանագրելով իր 8րդ յաղթանակը: Անոր նման իր 8րդ յաղթանակը արձանագրեց Լոս Անձելըս Լէյքըրս, 111-91 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Կոլտրոն Սթէյթ Ուորիորը:

Քոպէ Պրայընթը նշանակեց 31 կէտ, իսկ Լէյքըրսի անոր խմբակից Շաքիլ Օնիլ՝ 15 կէտ, 14 ռիպաունտ եւ 6 էսիսթ:

Արլանտա Հոքս արձանագրեց եղանակի իր երկրորդ յաղթանակը, 78-74 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Նիւ Եորք Նիքսը:

Ստորեւ՝ երկուսն մրցումներուն արդիւնքները:

Պոսթըն Սելթիքս - Հիուսթըն Ռոքեթս	96-81
Աթլանթա Հոքս - Նիւ Եորք Նիքս	78-74
Շարլոթ Հորնեթս - Ֆիլատելֆիա Սիքսթրոյ	88-73
Քլիվլենտ Բալթիքս - Մայեմի Հիթ	86-87
Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրս - Միլուոքի Պաքս	93-84
Մինեսոթա Վուլվս - Վանքուվըր Կրիկիթս	101-100
Ման Անթոնիօ Սփրըյ - Սիէթլ Սուփըրսոնիքս	112-85
Տէօնիքս Սանս - Նիւ Ջըրսի Նեթս	97-85
Եւրոպ ձեզ - Տենիլըր Նակէթը	116-78
Լ. Անձելըս Լէյքըրս - Կոլտրոն Սթէյթ Ուորիորս	111-91
Սաքրամենթո Քինկլ - Շիքսո Պուլլ	100-71

●ԱՅՍՈՐՈՒՄՆ յայտագրին վրայ է միայն մէկ մրցում. Թորոնթօ Ռեփթըրս կը ձակաւորուին Ֆէյքըրսի դէմ:

ՊԱՍՔԵԹՊՈԼԷՍԵՄԻՆԱՐ ԱՄՄԱՆԻ ՄԷՋ

Ամմանի «Տիւն Բայաթի» մէջ տեղի ունեցաւ սեմինար մը՝ «Չորրորդ տարեկան ընթացակարգի յարմարեցումները 2000-2001 եղանակին որեւէ մրցում ուղղակիօրէն պիտի չսփոթանան պատկերասփիւնի կայաններէն, որովհետեւ ֆետերասիոնը համաձայնութեան չէ կրցած գալ պատկերասփիւնի որեւէ կայանի հետ:

2000-2001 եղանակի նախօրեակին, Ա. դասակարգի ակումբները բաւական մեծ թիւով օտար մարզիկներ միացուցին իրենց կազմերուն, նախքան մարզիկներու փոխանցման սակարանին փակուիլը:

45 օտարականներ 15 տարբեր երկիրներէ իրենց մասնակցութիւնը կը բերեն 2000-2001 եղանակին:

Հ. Մ. Բ. Ս. օտարական մարզիկներն են. Վալիլի Մոկան (Ուրուգուայ), Գազիկ Սիմոնեան, Ստեֆան Պաղտասարեան եւ Սեւոսա Արզումանեան (Հայաստան):

ՍՏՈՐԵՎ ԿԸ ՍԿՍԻ 14ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆԸ

Շալքէ - Պոխու մրցումը բացման մրցումով այսօր կը սկսի Գերմանիոյ ֆութպոլի ախոյեանութեան (Պուստալի-կա) 14րդ հանգրուանը: Վաղը տեղի կ'ունենան հինգ մրցումներ, իսկ Կիրակի օր՝ երեք:

2րդ դիւբը գրաւող Շալքէ, որ միայն մէկ կէտով ետ կը մնայ պարագլուխի դիւբը գրաւող Պայեր Լեյքըրսը: Վրէն, առժամաբար պիտի գրաւէ պարագլուխի դիւբը, եթէ յաջողի իր դաշտին վրայ պարտութեան մատնել վերջին դիւբին վրայ գտնուող Պոխու, նկատի ունենալով, որ Լեյքըրսը իր մրցումը պիտի կատարէ Կիրակի օր, հիւրընկալելով Քայլըրայտըրը (6րդ):

Քայլըրայտըրը, որ Լեյքըրսը Վրէնէն 5 կէտով ետ կը մնայ, արդեօք պիտի յաջողի՝ անոր դաշտէն յաղթական վերադառնալ, մասնաւորապէս որ վերջին վեց տարիներուն մարզիչ Պերթի Ֆոլկի կազմը իր դաշտին վրայ պարտութիւն չէ կրած Քայլըրայտըրը:

Իր կատարած վերջին երկու մրցումներուն պարտութիւններ կրած ախոյեան Պայերն Միւնխի, որ այժմ կը գրաւէ 4րդ դիւբը, հիւրը պիտի ըլլայ Ֆրայպուրկի (11րդ):

Ստորեւ՝ 14րդ հանգրուանի մրցումներուն յայտագրերը:

- ԱՅՍՈՐ Շալքէ - Պոխու
- ՎԱՂԸ Ֆրայպուրկ - Պայերն Միւնխ
- Մյնխախա - Ֆրայպուրկ - Հերթա Պերլին
- Պորուսիա-Տորթմունտ - Վոլֆսպուրկ
- Քոպպու - Քէօլն
- Հանպս Ռոսթըք - Համպուրկ
- ԿԻՐԱԿԻ 1860 Միւնխի - Ունթըրհախինկ
- Վերտըր Պրեմըն - Շթուրպարկ
- Պայեր Լեյքըրսը - Քայլըրայտըր

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ 2000-2001 ԵՂԱՆԱԿԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԿՍԻ ՎԱՂԸ

ԱՎԼԻ ՍԱՅՏԱ.- Ապու Պաքըր Պա, Մոհամէտ Տալուստ (Սիէրրա Լեոնէ), Մուսա Պետիան եւ Քուսաթի Մատեօ (Սենեգալ):

ՍԱԺԵՍ.- Էմերսոն Տա Սիլվա, Մարսիլիօ Կուսուսա, Թոմի Ժիւզընտալի (Պրայիլ) եւ Սիւնտ Ժալա (Իրաք):

ՇԱՊԱՊ ՍԱՀԷԼ.- Եսապ Լաքիֆ, Սամիր Քապէմ, Մըհաննա Զէյնա եւ Մըհաննա Լուիս (Իրաք):

ՌԱՍԻԿ.- Արմէն Սաւանեան (Հայաստան), Մոհամէտ Պուստալի (Սիէրրա Լեոնէ) եւ Սիւպաթըր Սիսի (Սենեգալ):

Ստորեւ՝ 2000-2001 եղանակի Ա. դասակարգի ֆութպոլի ախոյեանութեան երթի մրցումներուն յայտագիրը:

ԹՈՒԱԿԱՆ	ՄՐՅՈՒՄ	ԺԱՄ	ԱՐԴԻՒՆԸ	ԴԱՇՏ
Ա. ՀԱՆԳՐՈՒՄՆ				
Շաքար, 25 Նոյեմբեր	Հ. Մ. Մ. - Սաժէս	2:15ին		Պ. Համուտ
Շաքար, 25 Նոյեմբեր	Ախա Ահլի Ալէյ - Ռասիկ	6:00ին		Պէյրուք
Կիրակի, 26 Նոյեմբեր	Նըժմէ - Անսար	2:15ին		Պէյրուք
Կիրակի, 26 Նոյեմբեր	Սաֆա - Հ. Մ. Բ. Մ.	2:15ին		Սաֆա
Կիրակի, 26 Նոյեմբեր	Սալամ - Շապապ Սահէլ	2:15ին		Թրիփոլի
Կիրակի, 26 Նոյեմբեր	Ահլի Սալտա - Թատ. Սուր	2:15ին		Սալտա
Բ. ՀԱՆԳՐՈՒՄՆ				
Շաքար, 2 Դեկտեմբեր	Ռասիկ - Սալամ	2:15ին		Ժունիէ
Շաքար, 2 Դեկտեմբեր	Անսար - Շապապ Սահէլ	6:00ին		Պէյրուք
Կիրակի, 3 Դեկտեմբեր	Թատամոն Սուր - Սաֆա	2:15ին		Սուր
Կիրակի, 3 Դեկտեմբեր	Հ. Մ. Բ. Մ. - Նըժմէ	2:15ին		Պ. Համուտ
Կիրակի, 3 Դեկտեմբեր	Սաժէս - Ահլի Սալտա	2:15ին		Սաֆա
Կիրակի, 3 Դեկտեմբեր	Ախա Ահլի Ալէյ - Հ. Մ. Մ.	2:15ին		Պէյրուք
Գ. ՀԱՆԳՐՈՒՄՆ				
Շաքար, 9 Դեկտեմբեր	Նըժմէ - Շապապ Սահէլ	6:00ին		Պէյրուք
Կիրակի, 10 Դեկտեմբեր	Հ. Մ. Բ. Մ. - Թատ. Սուր	2:15ին		Պ. Համուտ
Կիրակի, 10 Դեկտեմբեր	Ռասիկ - Անսար	2:15ին		Պէյրուք
Կիրակի, 10 Դեկտեմբեր	Սաֆա - Սաժէս	2:15ին		Սաֆա
Կիրակի, 10 Դեկտեմբեր	Սալամ - Հ. Մ. Մ.	2:15ին		Թրիփոլի
Կիրակի, 10 Դեկտեմբեր	Ահլի Սալտա - Ախա Ալէյ	2:15ին		Սալտա
Դ. ՀԱՆԳՐՈՒՄՆ				
Շաքար, 16 Դեկտեմբեր	Սաժէս - Հ. Մ. Բ. Մ.	2:15ին		Պ. Համուտ
Շաքար, 16 Դեկտեմբեր	Ախա Ահլի Ալէյ - Սաֆա	6:00ին		Պէյրուք
Կիրակի, 17 Դեկտեմբեր	Թատամոն Սուր - Նըժմէ	2:15ին		Սուր
Կիրակի, 17 Դեկտեմբեր	Շապապ Սահէլ - Ռասիկ	2:15ին		Սաֆա
Կիրակի, 17 Դեկտեմբեր	Հ. Մ. Մ. - Անսար	2:15ին		Պէյրուք
Կիրակի, 17 Դեկտեմբեր	Սալամ - Ահլի Սալտա	2:15ին		Թրիփոլի
Ե. ՀԱՆԳՐՈՒՄՆ				
Շաքար, 23 Դեկտեմբեր	Հ. Մ. Բ. Մ. - Ախա Ահլի Ալէյ	2:15ին		Պ. Համուտ
Շաքար, 23 Դեկտեմբեր	Նըժմէ - Ռասիկ	6:00ին		Պէյրուք
Կիրակի, 24 Դեկտեմբեր	Սաժէս - Թատամոն Սուր	2:15ին		Պէյրուք
Կիրակի, 24 Դեկտեմբեր	Հ. Մ. Մ. - Շապապ Սահէլ	2:15ին		Ժունիէ
Կիրակի, 24 Դեկտեմբեր	Ահլի Սալտա - Անսար	2:15ին		Սալտա
Կիրակի, 24 Դեկտեմբեր	Սաֆա - Սալամ	2:15ին		Սաֆա
Զ. ՀԱՆԳՐՈՒՄՆ				
Շաքար, 30 Դեկտեմբեր	Ռասիկ - Հ. Մ. Մ.	2:15ին		Ժունիէ
Շաքար, 30 Դեկտեմբեր	Սաժէս - Նըժմէ	6:00ին		Պէյրուք
Կիրակի, 31 Դեկտեմբեր	Թատ. Սուր - Ախա Ալէյ	2:15ին		Սուր
Կիրակի, 31 Դեկտեմբեր	Շ. Սահէլ - Ահլի Սալտա	2:15ին		Սաֆա
Կիրակի, 31 Դեկտեմբեր	Սալամ - Հ. Մ. Բ. Մ.	2:15ին		Թրիփոլի
Կիրակի, 31 Դեկտեմբեր	Անսար - Սաֆա	2:15ին		Պէյրուք
(2001)				
Է. ՀԱՆԳՐՈՒՄՆ				
Շաքար, 6 Յունուար	Ախա Ահլի Ալէյ - Սաժէս	2:15ին		Սաֆա
Շաքար, 6 Յունուար	Ահլի Սալտա - Ռասիկ	2:15ին		Սալտա
Շաքար, 6 Յունուար	Նըժմէ - Հ. Մ. Մ.	6:00ին		Պէյրուք
Կիրակի, 7 Յունուար	Թատամոն Սուր - Սալամ	2:15ին		Սուր
Կիրակի, 7 Յունուար	Սաֆա - Շապապ Սահէլ	2:15ին		Սաֆա
Կիրակի, 7 Յունուար	Հ. Մ. Բ. Մ. - Անսար	2:15ին		Պ. Համուտ
Ը. ՀԱՆԳՐՈՒՄՆ				
Երեքշաբթի, 9 Յունուար	Հ. Մ. Մ. - Ահլի Սալտա	2:15ին		Պ. Համուտ
Երեքշաբթի, 9 Յունուար	Ախա Ահլի Ալէյ - Նըժմէ	6:00ին		Պէյրուք
Չորեքշաբթի, 10 Յունուար	Սալամ - Սաժէս	2:15ին		Թրիփոլի
Չորեքշաբթի, 10 Յունուար	Ռասիկ - Սաֆա	2:15ին		Ժունիէ
Չորեքշաբթի, 10 Յունուար	Անսար - Թատամոն Սուր	6:00ին		Պէյրուք
Չորեքշաբթի, 10 Յունուար	Շապապ Սահէլ - Հ. Մ. Բ. Մ.	2:15ին		Սաֆա
Թ. ՀԱՆԳՐՈՒՄՆ				
Շաքար, 13 Յունուար	Ախա Ահլի Ալէյ - Սալամ	6:00ին		Պէյրուք
Կիրակի, 14 Յունուար	Ահլի Սալտա - Նըժմէ	2:15ին		Սալտա
Կիրակի, 14 Յունուար	Սաֆա - Հ. Մ. Մ.	2:15ին		Սաֆա
Կիրակի, 14 Յունուար	Սաժէս - Անսար	2:15ին		Պէյրուք
Կիրակի, 14 Յունուար	Հ. Մ. Բ. Մ. - Ռասիկ	2:15ին		Պ. Համուտ
Կիրակի, 14 Յունուար	Թատամոն Սուր - Շ. Սահէլ	2:15ին		Սուր
Ժ. ՀԱՆԳՐՈՒՄՆ				
Շաքար, 20 Յունուար	Շապապ Սահէլ - Սաժէս	2:15ին		Սաֆա
Շաքար, 20 Յունուար	Ռասիկ - Թատամոն Սուր	2:15ին		Պ. Համուտ
Շաքար, 20 Յունուար	Նըժմէ - Սալամ	6:00ին		Պէյրուք
Կիրակի, 21 Յունուար	Ահլի Սալտա - Սաֆա	2:15ին		Սալտա
Կիրակի, 21 Յունուար	Անսար - Ախա Ահլի Ալէյ	2:15ին		Պէյրուք
Կիրակի, 21 Յունուար	Հ. Մ. Բ. Մ. - Հ. Մ. Մ.	2:15ին		Պ. Համուտ
ԺԱ. ՀԱՆԳՐՈՒՄՆ				
Երեքշաբթի, 23 Յունուար	Սաժէս - Ռասիկ	6:00ին		Պէյրուք
Չորեքշաբթի, 24 Յունուար	Սալամ - Անսար	2:15ին		Թրիփոլի
Չորեքշաբթի, 24 Յունուար	Հ. Մ. Բ. Մ. - Ահլի Սալտա	2:15ին		Պ. Համուտ
Չորեքշաբթի, 24 Յունուար	Ախա Ալէյ - Շ. Սահէլ	2:15ին		Ժունիէ
Չորեքշաբթի, 24 Յունուար	Թատամոն Սուր - Հ. Մ. Մ.	2:15ին		Սուր
Չորեքշաբթի, 24 Յունուար	Սաֆա - Նըժմէ	6:00ին		Պէյրուք

